- [6] Emergency Situation Around the Burial Site of Obsolete and Banned Pesticides in Armenia. Available from: <<https://awhhe.am/emergency-situation-around-the-burial-site-of-obsolete-and-banned-pesticides-in-armenia/>> (accessed 03.03.2022).
- [7] Production and use of highly hazardous pesticides in Armenia, Kazakhstan, Russia, Ukraine and Uzbekistan: trends and perspectives for transition to safe alternatives. Available from: <[https://ipen.org/sites/default/files/documents/final\\_overall\\_hhp\\_summary\\_in\\_5\\_eecca\\_countries\\_18\\_may\\_2020.pdf](https://ipen.org/sites/default/files/documents/final_overall_hhp_summary_in_5_eecca_countries_18_may_2020.pdf)> (accessed 03.03.2022).
- [8] Правила отбора почвы для химического анализа. Режим доступа: <<https://clatipfo.ru/services/dlya-fizicheskikh-lits/khimicheskij-analiz-vody4600/>> (дата обращения: 03.03.2022).
- [9] Особенности пробоотбора и пробоподготовки объектов окружающей среды: учебно-методический комплекс дисциплины, Екатеринбург, 2008, с.32-35.
- [10] **S. Cesceri, A.E. Greenberg, A.D. Eaton (Eds.)**, Standard methods for the examination of water and wastewater, 20th edition, Washington, 1998, pp.6-91 – 6-96.
- [11] **Ю. Другов, А. Родин**, Газхроматографический анализ загрязненного воздуха, Москва, 2006, сс.356-361, 415-421.

## ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

### Մարիամ Ավետիսի Ավագյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ  
avagyan\_mariam@yahoo.com

1982 թ. սողանքային գոտում ք.Երևանի խորքային խզվածքի և Ջրվեժի ակտիվ խզվածքի մոտակայքում (Էրեբունու 4-րդ զանգվածի մոտ) կառուցվել է 110 մ երկարությամբ և 10...15 մ լայնությամբ թունաքիմիկատների գերեզմանատուն՝ առանց անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների: Այստեղ թաղված էր 60 անուն՝ մոտ 600 տ արգելված թունաքիմիկատ: Սողանքային պրոցեսների ընթացքում թունաքիմիկատները և դրանց քայքայման ածանցյալները մակերևութային ջրերով լվացման արդյունքում թափանցում են հող, մակերևութային ջրեր, տարածվում փոշու տեսքով, և մեծ հավանականությամբ, նաև Արարատյան դաշտի արտեզյան ավազան: Աղտոտվածության պատկերը պարզելու համար կատարվել է գերեզմանոցի և հարակից բնակելի տարածքի հողի ուսումնասիրություն. հեպտաքլորը գերազանցել է ՍԹԿ-ն 29 անգամ, 4,4'-DDD-ն՝ 1464 անգամ, մեթոքսիքլորի քանակը 19,628 մգ/կգ էր: Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը մնում է բնապահպանական սպառնալիք ք. Երևանի և Հայաստանի համար: Աշխատանքում արված են խնդրի լուծման մի շարք առաջարկներ:

**Բանալի բառեր.** կայուն օրգանական աղտոտիչներ, հող, թունաքիմիկատներ, Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց

## THE PROBLEM OF THE NUBARASHEN CEMETERY OF TOXIC CHEMICALS

### Mariam Avagyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA  
avagyan\_mariam@yahoo.com

In 1982, in the landslide zone, near the Yerevan deep fault and the Jrvezh active fault (near the 4th massif of Erebuni), a cemetery of toxic chemicals 110 m long and 10-15 m wide was built, without the necessary preparation foundations of the cemetery and without a system of drainage of sedimentary water. About 600 tons of pesticides of 60 names were buried here. As a result of landslide processes and washing out by sedimentary waters of pesticides and their derivatives formed in the process of their decomposition, it can be argued with a high degree of probability that the latter penetrated into the artesian basin of the Ararat Valley. To identify the picture of pollution, we conducted a study of the soil near the cemetery and a nearby residential area, found heptachlor in concentrations exceeding the MPC 27 times, 4,4'-DDD 1264 times, 4,4'-DDT 1315 times, alpha-HCCH 9 times, and methoxychlor was found in quantities 19,628 mg/kg. The environmental threat from the Nubarashen cemetery to Yerevan and Armenia remains unresolved. A number of strategic proposals have been made in the work.

**Keywords:** persistent organic pollutants, soils, pesticides, Nubarashen pesticide cemetery

**Ավագյան Մարիամ Ավետիսի, Կ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Գենետիկոլոգիայի և կենսա-  
անվտանգության ամբիոն, (+374)93438756, avagyan\_mariam@yahoo.com

**Авакян Мариам Аветисовна, к.б.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Геоэкологии и  
жизнеобеспечения, (+374)93438756, avagyan\_mariam@yahoo.com

**Avagyan Mariam, doctor of philosophy (Ph.D) in biology, associate professor** (RA, Yerevan) – NUACA, Chair  
of Geoeecology and Biosafety (+374)93438756, avagyan\_mariam@yahoo.com

Ներկայացվել է՝ 29.12.2022թ.

Գրախոսվել է՝ 09.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՀ ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՆՔԻ ՎՐԱ

Լիլիթ Սամվելի Բաբայան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*lilit.babayan93@gmail.com*

Հոդվածը նետուրսների ներկա սուղ պայմաններում ՀՀ հետարդյունաբերական մի շարք քաղաքների զգալի տարածքներ, կորցնելով իրենց հիմնական գործառույթը, ժամանակի ընթացքում դուրս են մնացել ակտիվ գործունեությունից և աստիճանաբար վերածվել լքված, անօգտագործելի գոտիների: Նման տարածքների քաղաքային միջավայրի հասակագծային, ծավալատարածական և ուրվագծային առավել արդյունավետ արդիականացման տարբերակ կարող է հանդիսանալ արդյունաբերական կլաստերային մոդելի տեղայնացումը: Մոդելի արդյունավետ կազմակերպումն ունի մրցակցության վրա ազդելու ներուժ՝ տարածական պլանավորման տեսանկյունից ստեղծելով միջհամայնքային նոր կապերի հնարավորություն: Կառաջադրվեն քաղաքային ճարտարապետական կերպարների արդիականացման նոր խնդիրներ՝ բարձրացնելով կլաստերի բաղադրիչ ընկերությունների արտադրողականությունը, նորարարական մոտեցումների ինտեգրումը և խթանելով տնտեսության նոր ոլորտներում բիզնեսի զարգացումը:

**Բանալի բառեր.** արդյունաբերական կլաստեր, տնտեսական զարգացում, հետարդյունաբերական տարածքներ, արդյունաբերական ավաններ, արդիականացում, տարածքի վերակազմավորում, կայուն զարգացում

### Ներածություն

Տնտեսության մեջ «կլաստերի» հայեցակարգը առաջին անգամ ներկայացվել է ամերիկացի տնտեսագետ Մայքլ Պորտերի կողմից 1990 թ., ով փաստում էր, որ «Կլաստերը աշխարհագրական դիրքով փոխկապակցված ընկերությունների և որոշակի տարածքում գործող կազմակերպությունների խումբ է, որոնք բնութագրվում են ընդհանուր գործունեությամբ և լրացնում միմյանց»: Ժամանակակից աշխարհում տարածված է ներկայացված կլաստերային մոտեցման հիման վրա տարածաշրջանային տնտեսության մրցունակության բարձրացման գաղափարը [1]:

Արդյունաբերությունը, որպես տնտեսության կարևորագույն ճյուղ, վճռորոշ ազդեցություն է գործում հասարակության արտադրողական ուժերի զարգացման մակարդակի վրա: Արդյունաբերական հեղափոխությունից հետո եվրոպական և հյուսիսամերիկյան երկրներում արդյունաբերությունը դարձել է արտադրության և աշխատանքի առանցքային ճյուղ՝ հետին պլան մղելով առևտրային և ֆեոդալական նախկին տնտեսությունը: Դա տեղի է ունեցել շնորհիվ այն բանի, որ արդյունաբերական հեղափոխությանը շատ արագ հաջորդել են տեխնոլոգիական բազմաթիվ նվաճումներ, այդ թվում՝ ածխի ու պողպատի արտադրությունը (նկ. 1):



**Նկ. 1. Արդյունաբերական հեղափոխությունների յուրաքանչյուր փուլում ենթակառուցվածքների զարգացում**

Հայաստանում ևս հետապատերազմյան շրջանում արտադրության զարգացման շնորհիվ ագրարային երկիրը հետզհետե դառնում է արդյունաբերական պետություն: 1960-1980–ական թթ. երկրում կառուցվեցին 390-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ: Ոլորտի զարգացումը մեծ խթան հանդիսացավ քաղաքաշինական և ճարտարապետատարածական նոր լուծումների առաջադրմանը: Այդ ժամանակաշրջանում կառուցվեցին մի շարք նոր քաղաքներ, որոնք դարձան արդյունաբերության կենտրոններ: Դրանցից էին Չարենցավանը, Հրազդանը, Աբովյանը, Քաջարանը, Դաստակերտը և այլն: Մի շարք նախկին ագրարային բնակավայրերի հենքի վրա կազմավորվեցին արդյունաբերական քաղաքներ՝ Վանաձոր, Հրազդան, Ախթալա, Թումանյան, Ալավերդի, Կապան և այլն: Այդ գործընթացը խթան հանդիսացավ ենթակառուցվածքների զարգացմանը, բարելավվեց հանրապետության տրանսպորտային համակարգը: Կառուցվեցին նոր ավտոմայրուղիներ, Սևան-Շորժա-Զոդ, Մասիս-Նուռնուս, Իջևան-Հրազդան երկաթուղիները, Երևանի մետրոպոլիտենը, մայրաքաղաքի «Զվարթնոց», «Էրեբունի» և Գյումրիի օդանավակայանները: Արդյունաբերության կենտրոնացումը քաղաքներում նպաստեց քաղաքային բնակչության աճին: Հանրապետության 27 քաղաքներում և 31 քաղաքատիպ ավաններում կենտրոնացված էր բնակչության 2/3-ը [2] :

Այսօր ՀՀ հետարդյունաբերական քաղաքներից շատերը գտնվում են տնտեսության՝ արդյունաբերականից սպասարկման ոլորտի անցումային իրավիճակում, ինչը ենթադրում է քաղաքների զարգացման ռազմավարության վերանայում ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական, քաղաքաշինական և շրջակա միջավայրի տեսանկյուններից: Միտումն առկա է աշխարհի խոշորագույն քաղաքներում, այն է՝ տնտեսության կառուցվածքի վերափոխում, սպասարկման ոլորտում զբաղվածների թվաքանակի զգալի աճ և արդյունաբերական ոլորտում ընդգրկվածների զգալի նվազում, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների լուծարում, արդյունաբերական տարածքների գործառույթների փոփոխություններ: Նման քաղաքներում խնդիրները միանման են, սակայն դրանց լուծումները, կապված տեղական առանձնահատկությունների հետ, միմյանցից զգալիորեն կտարբերվեն:

### **Նյութեր և մեթոդներ**

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է քննարկվող խնդրի համալիր վերլուծություն, մասնագիտական գրականության և արխիվային նյութերի, փաստաթղթերի, հրատարակված գիտական վերլուծությունների ու վիճակագրական տվյալների, իրականացված նախագծերի, տարածական պլանավորման հայեցակարգերի հավաքագրում և ամփոփում, համեմատական և իրավիճակային վերլուծություններ :

Հետազոտության ընթացքում իրականացվել է տեղական և միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա մշակվել են տարածքների փաստացի իրավիճակի, տնտեսական, քաղաքական և սոցիալական գործոնների ազդեցության գնահատման մոտեցումներ: Ձևավորվել է արդյունքների տեղայնացման մեթոդաբանություն՝ ծավալատարածական նոր մոտեցումների կիրառման և քննարկվող գործոնների համակարգային ազդեցությամբ տարածքների հեռանկարային զարգացման ապահովման համար:

### **Արդյունքներ և քննարկում**

#### ***Արդյունաբերական կլաստեր***

Որպես երկրի տնտեսության գերակա ճյուղ, արդյունաբերությունը կարիք ունի մշտադիտարկման և տնտեսության զարգացման նոր պահանջներին համընթաց առաջխաղացման: Արդյունաբերության մեջ կլաստերային մոդելները դարձել են տեղական և տարածաշրջանային զարգացման հետազոտությունների և պրակտիկայի ամենահայտնի հասկացություններից մեկը՝ ներառելով կազմակերպությունների մի շարք կամ խումբ, որոնք ընդհանուր մոդելի ներքո միավորում են իրենց նյութական, ֆինանսական և տեղեկատվական հոսքերը: Ձևավորված համակարգում մեկ արտադրության վերջնական կամ թափոն հանդիսացող արտադրանքը ծառայում է մյուս արտադրության համար որպես հումք կամ կիսապատրաստ արտադրանք:

Արդյունաբերական կլաստերների տարածական պլանավորումն իրենից ներկայացնում է նմանատիպ և/կամ հարակից ընկերությունների աշխարհագրական համակենտրոնացում, համախմբում, որոնք մրցակցային դաշտ են մտնում միջուկների (գլխավոր և երկրորդական) համաչափ բաշխվածության, ռեսուրսների առկայության և մասնագիտացված աշխատուժի շնորհիվ:

Արդյունաբերական կլաստերի տեղաբաշխման համար կարևոր են երեք հիմնական հատկանիշներ.

- հարմարավետ աշխարհագրական դիրքի առկայությունը (կլաստերային միջուկի ընտրություն),
- ընդհանուր արտադրանք (ռեսուրսներ, տեխնոլոգիա),
- կլաստերի շրջանակներում ընկերությունների միջև փոխադարձ սերտ կապեր:

Արդյունաբերական քաղաքների արդիականացումը և նոր գործառույթների վերագրումը ակնկալում է նոր ճարտարապետաքաղաքաշինական միջամտություններ: Միննույն տարածքում արտադրական գործառույթների կենտրոնացումը՝ հստակ ընդգծված մասնագիտացված

արդյունաբերական գոտիներն աստիճանաբար անհետանում են, իրենց տեղը զիջելով բազմագործառույթ թաղամասերի և շրջանների ձևավորմանը:

Կլաստերների ձևավորման համար կատարվող վերլուծությունները կարող են առաջ բերել մի շարք հիմնավորումներ՝ տարածքների վերագործարկման, արդիականացման, նորարարությունների և տնտեսական հետազոտությունների տեղայնացման համար: Կլաստերների ձևավորումը թույլ է տալիս երկրներին, առանձին համայնքներին և տեղանքներին ավելի մրցունակ դիրք զբաղեցնել գլոբալ տնտեսական շուկայում [3-5]:


***Արդյունաբերական կլաստերի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում***

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի տնտեսական-մշակութային դեմքը սկսեց արագորեն փոխվել: Արագընթաց զարգացող արդյունաբերության հետ զուգահեռ Հայաստանում գործարանների շուրջ կառուցվում էին քաղաքներ, ավաններ: Հանրապետության տնտեսության առաջատար ճյուղը դարձել էր արդյունաբերությունը, որի հետ էր կապված բնակչության մեծամասնության գործունեությունը: Արդյունաբերական վայրերում էր կենտրոնացած բնակչության կեսից ավելին՝ բնակչության հիմնական աշխատուժը:

ՀՀ տարածքում արդյունաբերական գոտիները ձևավորվում էին բնականոն երկու ուղղություններով.

1. արդեն իսկ ձևավորված բնակավայրերում կազմավորվել էին *արդյունաբերական հանգույցներ* (Երևան, Գյումրի, Վանաձոր, Ախթալա),
2. հատուկ արդյունաբերության զարգացման խթանման համար արտադրամասերի շուրջ ստեղծվել էին *քաղաքատիպ ավաններ* (Մեծամոր, Չարենցավան):

Ձևավորված արդյունաբերական գոտիներն (քաղաքները) իրենց ուրույն կառուցապատմամբ ստեղծեցին յուրատեսակ, տեխնոլոգիական պրոցեսներով պայմանավորված, բնորոշ ճարտարապետատարածական կերպար, շատ քաղաքների համար դառնալով ճանաչելի տարբերանշան (նկ. 2):




***Նկ. 2. Հրագդան քաղաք. արտադրական տարածքի ընդգծված կերպարը քաղաքային ճարտարապետական միջավայրում***

ՀՀ արդյունաբերական խոշոր գոտիներ ձևավորվել են երկրի հարավային և հյուսիսային մարզերում՝ Սյունիք և Լոռի: Հայաստանի հանքարդյունաբերության հսկաներից էին Կապանի

(Ղափանի) պղնձահանքային, Ալավերդու լեռնամետալուրգիական, Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատները: Վերջին տարիներին շարք մտավ Զոդի ոսկու կոմբինատը և Արարատի ոսկու կորզման գործարանը:

Վերոնշյալ քաղաքներն ունեցել են պատմականորեն ձևավորված և նախկին գործառույթներին հարմարեցված հստակ կազմակերպված բնակելի միջուկներ, որոնց կից հետագայում՝ բնակավայրերի բնականոն զարգացման արդյունքում, ձևավորվել են արդյունաբերական գոտիները՝ վերափոխելով հատակագծային կառուցվածքը պատմական և արդյունաբերական հատվածների անցումային գոտիների միջոցով: Հետագա զարգացումը դրանք վերածեց խոշոր արդյունաբերական հանգույցների՝ ձևավորված գործառական գոտիներով նոր բնակելի, հասարակական, մշակութային և դրանց միջև գործառնական-հատակագծային կապերի համակարգով և հեռանկարային տարածական զարգացման պոտենցիալ ուղղությունների նախանշմամբ:

Խորհրդային Միության փլուզումը և 90-ական թթ. երկրի ներքին և արտաքին քաղաքական վիճակը հանգեցրեցին տնտեսության բոլոր ոլորտների անկման (հատկապես արդյունաբերության), ինչն իր զգալի ազդեցությունը թողեց արդյունաբերական քաղաքների հետագա զարգացման վրա (նկ. 3): Այդ ժամանակ գործող հսկա արտադրական տարածքներն այսօր վերածվել են լքված, չշահագործվող տարածքների, որոնք փորձում են իրենց գոյությունը պահպանել փոքր արտադրամասերի գործունեության հաշվին: Հաշվի առնելով երկրի արդյունաբերական ձևավորված հանգույցները և առկա պոտենցիալը, արդյունաբերության՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ներկա առաջընթացը, դրանց առաջադրած նոր մոտեցումներն ու պահանջները տարածքների կազմակերպման նկատմամբ, ինչպես նաև ներկայում բազմագործառույթ խառը տարածքների խրախուսման միտումները, առաջարկվում է համախմբել դրանք՝ կլաստերային մոդելի տեղայնացման փորձով, ակնկալելով տնտեսության բազմաոլորտ առաջընթաց: Այս ամենն իր հերթին անդրադարձ կունենա համապատասխանաբար ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալատարածական լուծումների նոր մոտեցումների առաջադրման վրա [6 -11]:



**Նկ. 3. ՀՀ մարզերի տնտեսության կառուցվածքում արդյունաբերական ոլորտի զբաղեցրած մասնաբաժինների համահավաք պատկեր, ըստ որի Երևան քաղաքում այն ամենաբարձրն է, իսկ ամենացածրը՝ Տավուշի մարզում**

Կլաստերները կարող են խթանել տարածաշրջանային մրցունակությունը հետևյալ հիմնական տեսանկյուններից.

- գործարար արտադրողականության բարձրացում,
- ապագա արտադրողականության աճի վրա հիմնված նորարարական ներուժի խթանում,
- կլաստերի ընդլայնմանն ու ամրապնդմանն ուղղված նոր ձեռնարկությունների ստեղծում,
- եկամտաբերության տոկոսային աճ,
- կլաստերի մաս կազմող համայնքների (ընկերությունների) աշխատանքի արդյունավետության բարձրացում՝ ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային օգտագործման հաշվին,
- սեփական արդյունքների բարելավմանն ուղղված մրցակցություն:


Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը բազմաճյուղ է, ինչն ըստ էության առավելություն է համարվում: Չնայած Հայաստանում մասնագիտացված կենտրոնացման եզակի օրինակների գործունեությանը, վերոնշյալ առավելությունը զգալիորեն թույլ է արտահայտվում: Կլաստերային մոդելի միջոցով արդյունաբերական հանգույցների տարածական համախմբումը կամբողջացնի տնտեսության ոլորտի պատկերը՝ նպաստելով գոյություն ունեցող համալիրների համատեղ զարգացմանը [12, 13]:

Ճարտարապետության տեսանկյունից նոր խնդիրներ են առաջանում քաղաքների գոյություն ունեցող կերպարների պահպանման և դրանց արդիականացման համար: Բազմաթիվ գործարաններ կան, որոնք դիտարկվում են որպես խորհրդային շրջանի ճարտարապետական և քաղաքաշինական ժառանգություն և դրանք կարելի է տարբեր ձևով վերագործարկել: Նոր գործառույթները, որոնք հնարավոր կլինի առաջադրել կլաստերային ցանցով փոխկապակցվող հետարդյունաբերական տարածքներին, կարիք կունենան սպասարկող ենթակառուցվածքների բարելավման, բացակայության դեպքում՝ ներդրման:

ՀՀ յուրաքանչյուր մարզ մասնագիտացել է արտադրության իր ոլորտում, ուստի հիմք ընդունելով ՀՀ տարածքում առկա արդյունաբերական հանգույցները, հնարավոր են հետևյալ արդյունաբերական կլաստերի ճյուղավորումները.

- գյուղարտադրական,
- ռազմաարդյունաբերական,
- թեթև արդյունաբերության,
- վերամշակման գործարանների և այլն:

ՀՀ արդյունաբերական ուղղվածության կենտրոնացման հիմնական գոտիների՝ հյուսիսային՝ Լոռու և հարավային՝ Սյունիքի մարզերի վերլուծությունն ի հայտ է բերել վերոնշյալ պատկերը (նկ. 4):










**Նկ. 4. ՀՀ արդյունաբերական ուղղվածության կենտրոնացման հիմնական գոտիների բաշխվածությունը և դրանց փոխադարձ կապերը**

ՀՀ հետարդյունաբերական մի շարք քաղաքների արտադրական տարածքների կառուցվածքի դինամիկան ներկայացվում է աղյուսակում.

*Աղյուսակ*

**ՀՀ տարբեր մարզերի քաղաքների արդյունաբերական տարածքների վերլուծություն**

Անվանումը, պատկերը	Բնակչություն, մարդ	Համայնքի տարածք, հազ/արդյունաբերական գոտու տարածք, հազ	Արդյունաբերության ուղղվածություն	Գործող/չգործող նախկին գործարարություն/արդյունաբերական գործարարություն	Տեղաբաշխումը քաղաքի հատակագծային կառուցվածքում	Հեռանկարային պտտեցիալ կլաստերային մոդելի կիրառումը
1	2	3	4	5	6	7
 <p>Երևան</p>	1092800	22328/1210	Թեթև և սննդի արդյունաբերական, մեքենաշինական, հաստոցաշինական, քիմիական և այլ ոլորտի գործարաններ	Մասնակի գործող, որոշ արտադրական տարածքներ չեն գործում	Կոմպակտ (արդյունաբերական հանգույցներ)	Աշխատատեղերի ստեղծում, ենթակառուցվածքների (ճանապարհներ, երկաթգիծ) բարելավում, քաղաքային խաթարված կերպարի վերականգնում

1	2	3	4	5	6	7
 Վանաձոր	76220	2510/ 305,99	Սննդի և թեթև արդյունաբերության, քիմիական, մեքենաշինական արտադրություն.	Գործող արտադրություն	Գծային (գետի երկայնքով ձգվածությամբ)	Առկա արտադրական տարածքների վերագործարկում, հնարավոր նոր գործառնությունների տեղակայում
 Հրազդան	39957	2100 / 415	<u>Բազմագործառնություն</u> (Հրազդանի ՊՇԷԿ, Աթարբեկյանի ՀԷԿ, «Հրազդանմեքենա» ՓԲԸ, տնաշինական և ցեմենտի գործարաններ)	Մասնակի գործող	Կոմպակտ (արդյունաբերական հանգույց)	
 Գյումրի	111138	4520/1081	Հանքարդյունաբերություն	Չգործող	Ցրված (բաշխված են քաղաքի տարբեր ուղղություններով)	Արտադրական տարածքների վերագործարկում, նոր գործառնությունների տեղակայում
 Կապան	41512	4864/217	<u>Միագործառնություն</u> (լեռնամետալուրգիական)	Գործող	Կոմպակտ (հանգույց)	Առկա արտադրական տարածքների փոխկապակցում, գործառնությունների վերաբաշխում ներկլաստերային համակարգում
 Քաջարան	6810	1996/779	<u>Միագործառնություն</u> (Պղնձամոլիբդենային կոմբինատ)			
 Արարատ	20385	1466,85/ 401,29	Լեռնահանքային արդյունաբերություն	Գործող	Տարանջատ	

Աղյուսակի արդյունքների ընդհանրացմամբ ձևավորում է հետևյալը պատկերը.

- դիտարկված քաղաքների հատակագծային կառուցվածքում արդյունաբերական գոտիները զբաղեցնում են 6-ից 40% մակերես,
- դրանցից ներկայումս տարածքային միջինացված ցուցանիշով ակտիվ օգտագործվում են 10-ից 30% -ը,
- նախկին գործառնությունները պահպանված են մոտավորապես 40 %-ում [14 -18]:

Հետևաբար, քաղաքների հատակագծային կառուցվածքում առկա են զգալի չօգտագործվող տարածքներ, որոնք կարող են ծառայել որպես նույն գործառնությի՝ նորովի վերագործարկման

գործընթացում որպես արդյունաբերական կլաստերի համար պահուստներ, որոնք տեխնոլոգիական նոր մոտեցումների ընձեռած հնարավորություններով պայմանավորված, պահանջում են համեմատաբար սակավ տարածքային ռեսուրսներ, ուստի զգալի նախկին արդյունաբերական տարածքներ կարող են վերադարձվել քաղաքային տնտեսությանը՝ այլ նպատակներով օգտագործելու համար:

Արդյունաբերական գոտիների կլաստերացումը ենթադրում է հնարավորություն վերաշահագործել նախկինում հիմնված արդյունաբերական ավանները՝ վերագործարկման, նոր գործառույթների բաշխման և բաղադրիչների համակարգային գործարկման տարբերակով, ինչը տարածքների զարգացման գործընթացում կհանգեցնի.

- նոր աշխատատեղերի ստեղծման,
- ներհամայնքային և միջհամայնքային հատակագծային կառուցվածքների վերակազմավորման,
- համայնքների միջև տնտեսական նոր կապերի ստեղծման և համակարգային փոխկապակցված զարգացման,
- ծավալահատակագծային նոր ձևերի ներդրման՝ նոր տեխնոլոգիաների առաջադրած պահանջներին համապատասխան:

Աղյուսակում ներկայացված բնակավայրերից որոշները, կատարված վերլուծության համաձայն, ի սկզբանե ձևավորվել են որպես արդյունաբերական ուղղվածության բնակավայրեր՝ համապատասխան ենթակառուցվածքներով և կանոնավոր հատակագծային կառուցվածքով: Որոշները, նախապես ձևավորված լինելով որպես այլ պրոֆիլի բնակավայրեր՝ առողջարանային, մշակութային և այլն, շատ դեպքերում անգամ ներկայացնելով և ընդգրկելով մեկ կամ մի քանի գյուղական բնակավայրեր՝ համապատասխան հատակագծային կառուցվածքով, արդյունաբերական գործառույթի կիրարկման արդյունքում կրեցին հետևյալ քաղաքաշինական և ծավալատարածական փոփոխությունները:

- **Գծային ենթակառուցվածքների զարգացում.** Ճանապարհների կամ երկաթգծի ցանց՝ արդյունաբերական հանգույցներից հանքանյութի տեղափոխման համար (կանոնավոր, արդյունավետ ուղղություններով):

- **Ճարտարապետատարածական կերպարի փոփոխություն.** պայմանավորված նախկին գործառույթներով՝ գլխավորապես 1-2 հարկանի, տեղական շինանյութի կիրառմամբ ի սկզբանե իրականացված և ցածր խտությամբ կառուցապատված թաղամասերը փոխարինվում են միջին և բարձր հարկայնությամբ, մեծ խտություններ ապահովող և կառուցման արագության ապահովման նկատառումներից ելնելով՝ գործարանային պատրաստի էլեմենտներով իրականացված շենքերով:

- **Սոցիալական և սպասարկման ենթակառուցվածքի զարգացում.** մարդկանց՝ արդյունաբերության ոլորտում զբաղվածության հետ կապված, ձևավորված բնակության վայրերն ինքնաբավ ձևավորելու միտումով բարենպաստ մատչելիության գոտում աշխատող հատվածի սոցիա-

լական, սպասարկաման և ժամանցային կարիքների բավարարման հաստատությունների տեղակայում:


Կատարված վերլուծության արդյունքում երևում է, որ բնակայրերը կրել են ինչպես հատակագծային կառուցվածքային փոփոխություններ, այնպես էլ աճել են ըստ բարձրության՝ փոխելով քաղաքների ձևավորված ուրվապատկերը ինչպես բնակելի բազմաբնակարան կառուցապատման շնորհիվ, այնպես էլ արդյունաբերության տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպմամբ պայմանավորված՝ արդյունաբերական առանձին կառույցների ուրույն հատկանշական և ճանաչելի ուրվագծերով:

Կլաստերային մոդելի պարզագույն, արդեն իսկ գործող սաղմնային օրինակը առկա է Արարատ քաղաքում: Չողի հանքավայրի հանքանյութը՝ երկաթգծով տեղափոխելով Արարատ քաղաք, հետագա մշակման է ենթարկվում քաղաքի վարչական տարածքում կառուցված գործարանում: Կից ձևավորվել է աշխատողների համար բնակելի գոտի՝ Չողի բանվորական ավանը, կլաստերի ձևավորմամբ փոփոխության ենթարկվելով քաղաքի ձևավորված հատակագծային կառուցվածքը (նկ. 5):


Մոդելի տեղայնացման հնարավոր տարբերակ է Սյունիքի մարզի հիմնական արդյունաբերական հանգույց հանդիսացող Քաջարան քաղաքը, որը միագործառնական նշանակություն ունի, տնտեսությունը՝ միաբևեռ բնույթ, ինչը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա: Արտադրական գործառույթի բաշխումը հարակից բնակավայրերի միջև, որպես կլաստերային երկրորդական միջուկներ կապահովի կապ բնակավայրերի միջև, ինչպես նաև կնպաստի այդ բնակավայրերի աշխուժացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը և տա րածքների կայուն զարգացմանը (նկ. 6):

**Եզրակացություն**

Արդյունաբերական տնտեսության մեջ կլաստերային փոխկապակցված բազմաճյուղ մոդելի տեղայնացումը հնարավոր է դարձնում ավելի խոշոր արդյունքների ակնկալման՝ նպաստելով հարակից սպա-



**Նկ. 5. Չող արտադրական հանգույցի տեղադիրքը Արարատ քաղաքի հատակագծային կառուցվածքում և դրանց միջև առկա ներկլաստերային կապերը**



**Նկ. 6. Քաջարան քաղաքի արտադրական հագույցի վերաբաշխման՝ կլաստերային մոդելի ձևավորման սխեմա**

սարկող ոլորտների զարգացմանը: Արդյունաբերական կլաստերի ձևավորումը ենթադրում է մի քանի արտադրությունների համատեղ և համաչափ բաշխված փոխկապակցված գործառույթների իրականացում:

Ներկայումս, գտնվելով համաշխարհային տնտեսական զարգացումների և փոփոխությունների արագ դինամիկայի դարաշրջանում, ՀՀ տնտեսության առջև ի հայտ են գալիս նորանոր մարտահրավերներ և վերջիններիս հաղթահարման բազմապիսի տարբերակներ: Նորարարական զարգացման տեսլականի հեռանկարային լինելու փաստը կարող է լինել մեր պետության տնտեսության կարգավորման և մրցունակության բարձրացման հզոր խթան:

Կլաստերային արտադրության կազմակերպումը վերոնշյալ արդյունաբերական միավորումներում և դրանց համակարգային հաջողությունը հնարավոր կլինի վերագրել արտաքին տնտեսական մասշտաբի հասկացությանը, որտեղ մեծաքանակ փոքր ձեռնարկությունների համակցվածությունը կառաջացնի վերջիններիս գործունեության արդյունավետության բավակա-նին բարձր մակարդակ:

Կլաստերացումն իրատեսական հնարավորություն կընձեռնի նաև մարզերի գործող արտադրությունների արդյունքում տուժած կամ էկոլոգիական բացասական ազդեցության տակ գտնվող գոտիների քաղաքաշինական և բնապահպանական խնդիրների լուծմանը: Մարդածին ազդեցության ենթարկված տարածքները բնակավայրերի տարածքում զբաղեցնում են զգալի մակերեսներ՝ պայմանավորված հանքարդյունաբերության հետ:

### Գրականության ցանկ

- [1] **M.E. Porter**, Location, competition and economic development: Local clusters in a global economy. *Economic development quarterly* 14 (1) (2000) 15-34.
- [2] **L. Babayan**, Architectural-planning features of Hrazdan city' s industrial territories adaptation as a core of military industrial cluster, Потенциал интеллектуально одарённой молодежи – развитию науки и образования: Материалы VIII Международного научного форума молодых ученых, инноваторов, студентов и школьников 23–25 апреля, 2019 г., Т. 1, с. 274-278.
- [3] **Е.М. Турганбаев, М.В. Козлова**, Индустриальные кластеры: идентификация и оценка из воздействия на экономику региона, в: Сборник научных статей, под ред. Р.М. Нижегородцева. –УПЦ «Набла» ЮРГТУ (НПИ), Новочеркасск, 2010, 13 с.
- [4] **E.J. Feser, E.M. Bergman**, National Industry Clusters: Frameworks for State and Regional Development Policy, University of North Carolina (prepared for Regional Studies, August 6, 1997).
- [5] **D. Maillat**, From the Industrial District to the Innovative Milieu Contribution to an Analysis of Territorialised Productive Organisations. *Recherches Economiques de Louvain* 64(1) (1998) 111-129.
- [6] Formation and development of industrial clusters in the socio-economic regional system, Available from: <<https://www.revistaespacios.com/a18v39n31/18393125.html>>. (accessed 16.05.2022).

- [7] **Н.И. Бабкина, С.В. Здольникова, А.А. Басова**, Управление инновационным потенциалом промышленного кластера для повышения конкурентоспособности и устойчивого роста экономики региона. Известия Юго-Западного государственного университета 2(19) (2016) 46–55.
- [8] **P.S. Benneworth, and D.R. Charles**, Bridging cluster theory and practice: learning from the cluster policy cycle, in: T.M. Bergman, P. Den Hertog, D. Charles, and S. Remoe (Eds.), Innovative clusters: drivers of national innovation systems, OECD, Paris, 2001.
- [9] **A. Carrie**, Integrated clusters - the future basis of competition. International Journal of Agile Management Systems 1 (1) (1999).
- [10] **M. Porter**, Clusters and the New Economics of Competition, Harvard Business Review, November 1 (1998).
- [11] **E.J. Feser, and E.M. Bergman**, National Industry Clusters: Frameworks for State and Regional Development Policy, University of North Carolina, 1977 (prepared for Regional Studies, August 6, 1997).
- [12] Հայաստանի Հանրապետության կառավարություն 10 ապրիլի 2003 թվականի N 610-Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատելու մասին:
- [13] Արդյունաբերության զարգացման քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի Նախարարություն, Հասանելի է՝ <<https://www.mineconomy.am/page/97>> (Մուտք 10.08.2022):
- [14] Լոռու մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://lori.mtad.am/about-communities/463/>> (Մուտք 06.04.2022):
- [15] Կոտայքի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ և բնակավայրեր, Համայնքների և բնակավայրերի մասին. Հասանելի է՝ <<http://kotayk.mtad.am/about-communities/1/>> (Մուտք 15.04.2022):
- [16] Շիրակի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://shirak.mtad.am/about-communities/576/>> (Մուտք 17.04.2022):
- [17] Արարատի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://ararat.mtad.am/about-communities/69/>> (Մուտք 22.04.2022):
- [18] Սյունիքի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://syunik.mtad.am/about-communities/>> (Մուտք 26.04.2022):

## ПОТЕНЦИАЛ ФОРМИРОВАНИЯ ПРОМЫШЛЕННЫХ КЛАСТЕРОВ НА БАЗЕ ПОСТИНДУСТРИАЛЬНЫХ ОБЩИН РА

**Лилит Самвеловна Бабаян**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА  
lilit.babayan93@gmail.com*

*В существующих условиях нехватки земельных ресурсов значительные территории ряда постиндустриальных городов РА, потеряв свою основную функцию, со временем были исключены из активной деятельности и постепенно превратились в заброшенные, непригодные для использования зоны. Наиболее эффективным вариантом модернизации планировочной, объемно-пространственной,*

контурной городской среды таких территорий может стать локализация промышленной кластерной модели. Оптимальная организация модели может влиять на конкуренцию, создавая возможность новых межобщинных связей с точки зрения пространственного планирования. Будут поставлены новые задачи модернизации городских архитектурных образов, повышение производительности кластерных компаний, интеграция инновационных подходов и стимулирование развития бизнеса в новых секторах экономики.

**Ключевые слова:** промышленные кластеры, экономическое развитие, постиндустриальные районы, промышленные поселки, модернизация, реструктуризация территории, устойчивое развитие

## THE POTENTIAL FOR THE FORMATION OF INDUSTRIAL CLUSTERS BASED ON THE POST-INDUSTRIAL COMMUNITIES OF RA

**Lilit Babayan**

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA*

*lilit.babayan93@gmail.com*

*In the current conditions of shortage of land resources, significant territories of a number of post-industrial cities of the Republic of Armenia, having lost their main function, were eventually excluded from active activity and gradually turned into abandoned, unusable zones. Localization of the industrial cluster model can become the most effective option for modernization of the planning, spatial, contour urban environment of such territories. The optimal (effective) organization of the model can influence competition, creating the possibility of new intercommunal connections from the point of view of spatial planning. New tasks will be set to modernize urban architectural images, increase the productivity of cluster companies, integrate innovative approaches and stimulate business development in new sectors of the economy.*

**Keywords:** *industrial clusters, economic development, post-industrial areas, industrial settlements, modernization, territory restructuring, sustainable development*

**Բարայան Լիլիթ Սամվելի, Ճարտ. թեկն.** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեխնիկական պատմության և ժառանգության ամբիոն, ասիստենտ, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

**Бабаян Лилиит Самвеловна, канд. архит.** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Теории архитектуры, истории и наследия, ассистент, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

**Babayan Lilit, doctor of Philosophy (Ph.D) in Architecture** (RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Theory, history and heritage, Assistant, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

Ներկայացվել է՝ 22.12.2022թ.

Գրախոսվել է՝ 27.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Սարգիս Արիստակեսի Թովմասյան\*, Արսեն Արսենի Առուստամյան,

Հայկ Կարենի Զիրաքյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ**\*tosar@mail.ru*

Հոդվածում ներկայացված են բնակավայրերի կարգավիճակին առնչվող հիմնախնդիրներն ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Հիմնավորվել է, որ ներկայումս մեր երկրում կիրարկվող բնակավայրերի դասակարգումը, սահմանափակվելով միայն «քաղաք» և «գյուղ» հասկացություններով, աղերսներ չունի հայրենական պատմական փորձի հետ, բացի այդ, դեռևս սահմանված չեն բնակավայրերի կարգավիճակի որոշման սկզբունքները: Արտերկրում կիրարկվող փորձի հիման վրա ընտրվել են բնակավայրերը բնորոշող առանցքային ցուցանիշները՝ բնակչության թիվը, հանրային ծառայություններ ապահովող ենթակառուցվածքների առկայությունը և բնակչության հիմնական զբաղվածությունը՝ վերլուծելով և գնահատելով ՀՀ բնակավայրերի ընդհանրական պատկերն ըստ այդ ցուցանիշների: Վերլուծության արդյունքում առաջարկվել է բնակավայրերը բնորոշելու համար կիրառել ոչ միայն «քաղաք» և «գյուղ», այլև «ոստան», «քաղաքատիպ ավան» և «ավան» հասկացությունները: Մշակվել է բնակավայրերի տարակարգման նոր մոդել՝ ըստ նշված հասկացությունների և ընտրված չափանիշների: Ներկայացվել են բնակավայրերի գործող դասակարգման հիմնական փոփոխությունները և լրացումները՝ առաջարկվող մոդելի կիրարկման արդյունքում: Առաջարկությունները կարող են կիրառելի լինել հանրապետության բնակավայրերի դասակարգմանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ժամանակ:

**Բանալի բառեր.** բնակավայր, քաղաք, գյուղ, ենթակառուցվածքներ, բնակչության թիվ, զբաղվածություն

**Ներածություն**

Քաղաքները, որպես մարդկանց բնակության ու համակեցության յուրահատուկ միջավայր, ձևավորվել և զարգացել են քաղաքակրթության պատմությանը զուգընթաց: Պատմական տարբեր ժամանակահատվածներում շոշափելիորեն փոխվել է քաղաքներին բնորոշ հատկանիշների շրջանակը: Եթե անտիկ աշխարհում քաղաքային բնակչության կարևոր շերտ էր հանդիսանում մասնավոր հողատերերի հանրույթը, ապա միջնադարից սկսած քաղաքներն այլ բնակավայրերից տարբերակող հիմնական ցուցիչներ են հանդիսացել բնակիչների գործունեության բազմազանու-

թյունը, ինչպես նաև առօրյա կարիքների ամբողջական շրջանակը տեղում բավարարելու հնարավորությունները՝ հիմնականում ապրանքային շուկաների և արտադրության կազմակերպման միջոցով [1]:

Ներկայումս բնակավայրերին քաղաքի կարգավիճակ տալու համընդհանուր կիրառման սկզբունքները բացակայում են և ինչպես տարբեր երկրների օրենսդրությամբ, այնպես էլ գիտական հրապարակումներում բավականին տարբեր մոտեցումներով է բնորոշվում «քաղաք» հասկացությունը: Առանձին դեպքերում բնորոշման հիմքում դրվում են զուտ քանակական ցուցանիշները (բնակչության թիվ և խտություն), սակայն այս պարագայում նույնպես այդ ցուցանիշները շոշոփելիորեն տարբեր են, պայմանավորված երկրի մեծությամբ կամ պատմական ավանդույթներով: Նույնիսկ միջազգային կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերում է արձանագրված տարբեր երկրներում դասակարգման տարբերությունների պատճառով ընդհանուր հանձնարարականներ ձևավորելու բարդությունը: Մասնավորապես, Դանիայում քաղաքի կարգավիճակ կարող է ստանալ 200 բնակիչ ունեցող բնակավայրը, Արգենտինայում՝ 2000, Հնդկաստանում՝ 5000, Ճապոնիայում՝ 50000, իսկ Չինաստանում՝ 100000: Այսուհանդերձ, փորձեր են կատարվում ձևավորելու համընդհանուր մոտեցումներ ինչպես քաղաքները, այնպես էլ ավանները և գյուղերը դասակարգելու համար [2, 3]: Գիտական հրապարակումներում ավելի շատ տարածված է բնակավայրերի դասակարգման ժամանակ ոչ թե քանակական, այլ գործառույթային ցուցանիշները հաշվի առնելը [4-8]: Վերջիններիս թվում կարևորվում են բնակչության զբաղվածության բազմաշերտությունը, հանրային նշանակության մոնումենտալ կառույցների և նույնիսկ կառավարման մարմինների առկայությունը:

20-րդ դարի սկանավոր ճարտարապետ Լե Կորբյուզիեն քաղաքը բնորոշում է որպես ձեռակերտ օրգանիզմ, որը կոչված է պաշտպանելու մարդուն և ստեղծելու պայմաններ բնակվելու, աշխատելու և հանգստանալու համար: Քաղաքային կառուցվածքում նա կարևորում է բնակչության խտության, գործարար, ուսումնական և հանրային կենտրոնների, կանաչ տարածքների, փողոցային ցանցի, արդյունաբերական գոտիների առանձնացման, գեղագիտական և այլ խնդիրների լուծումները [9]:

Հայաստանում ևս պատմականորեն ձևավորվել են բնակավայրերը որոշակի կարգավիճակով բնորոշելու յուրահատուկ մոտեցումներ: Այդ բնորոշումները տեղ են գտել նաև հայոց լեզվում, ուր «բնակավայր» հասկացության տարբերակումները արմատավորվել են վաղնջական ժամանակներից, ընդ որում, տարբերակումների հիմքում դրվել է հիմնականում բնակավայրի մեծությունը և զբաղվածությունը: Ներկայացնենք բնակավայրերի տարբերակման հետևյալ հիմնական տեսակները.

- մայրաքաղաք – «Մեծն քաղաք՝ մայր համարեալ այլոց քաղաքաց իբրու դստերաց իւրոց»,
- թագաւորեալ քաղաք – «իբր Թագաւորանիստ, թագաւորական. Դշխոյ այլոց քաղաքաց»,

- ոստան – մեծ քաղաք, «ապա Ոստանն է Քաղաք ազատ և բարձրապատիվ, արքունական կամ իշխանական յայլնայլ գաւառս հայոց. օր.Դուին (որ թարգմանի բլուր), Վաղարշապատ, Երուանդաշատ,..Նախճաւան և այլն»,
- քաղաք – «Բնակութիւն բազմութեան մարդկան իբր քաղելով ժողովելոց ի մի վայր. շինուած բնակութեանց՝ բաժանեալ ի տունս տունս և ի փողոցս և ի հրապարակս. և ներքին իսկ բնակիչք»,
- գյուղաքաղաք, գեղաքաղաք – «Քաղաքագիւղ, աւան»,
- ավան – «Գիւղ մեծ. Քաղաք փոքր կամ անպարիսպ»,
- գյուղ – «Շէն. աւան, բնակութիւն ի վայրս անդաստանաց. Հանդերձ ազարակօք անդեովք»,
- ազարակ – «Գետին բացօթեայ մշակեալ, ուր արտորայք են և սակաւ բնակութիւն. Որ և Անդաստան» [10]:

Նշված ձևակերպումները որոշակի պատկերացում են տալիս բնակավայրերի բնույթի մասին: Այսօր էլ թվարկված բառերը շարունակում են գոյատևել և օգտագործվել հայերենում, բացառությամբ «թագաւորեալ քաղաքի»՝ հասկանալի պատճառով: Այսուհանդերձ, զուտ իրավական ձևակերպման կամ կարգավիճակի առումով, ներկայումս կիրարկվում են միայն «քաղաք» և «գյուղ» եզրույթները, առանձին դեպքերում լրացվելով «մարզկենտրոն» կամ «համայնքի կենտրոն» բառերով:

Իսկ թե ինչ սկզբունքով են բնակավայրերը ստանում քաղաքի կամ գյուղի կարգավիճակ, Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով սահմանված չէ: 1995 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի մայր տարբերակի 4-րդ հոդվածում տրված է բնակավայրերի սահմանումը, համաձայն որի, «Բնակավայրերը մշտական բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավորներ են» [11]: Օրենքում սահմանված չեն բնակավայրերին քաղաքի կամ գյուղի կարգավիճակ տրամադրելու սկզբունքները, այդ խնդիրը լուծվել է՝ օրենքի հավելվածում բնակավայրի անվանման դիմաց «քաղաք» կամ «գյուղ» գրելով:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով [12] սահմանված են բնակավայրերի դասակարգման սկզբունքները՝ ըստ բնակչության թվի (աղ. 1), սակայն այս փաստաթղթում ևս տրված չեն բնակավայրերի կարգավիճակի սահմանման հիմքերը: Բացի այդ, հատկապես քաղաքների դասակարգումը չի արտացոլում ՀՀ առանձնահատկությունները կամ առկա իրողությունները, մասնավորապես, մեր երկրում չկա «խոշոր» բնորոշմանը համապատասխանող որևէ քաղաք:

*Բնակավայրերի դասակարգումն ըստ ՀՀ շինարարական նորմերի*

Հ/հ	Բնակավայրերի խմբերը	Բնակչությունը, հազար մարդ	
		քաղաքային բնակ.	գյուղական բնակ.
1	Խոշորագույն	500-ից ավելի	5-ից ավելի
2	Խոշոր	250...500	3...5
3	Մեծ	100...250	1...3
4	Միջին	50...100	0,2...1,0
5	Փոքր	20...50	0,05...0,20
		10...20	մինչև 0,05

Սույն հոդվածում ուսումնասիրվել են բնակավայրերի կարգավիճակին առնչվող՝ արտերկրի և Հայաստանի պատմական փորձը, պաշտոնական փաստաթղթերն ու գիտական հրապարակումները: Համեմատական վերլուծությունների և ընդհանրացումների հիման վրա ներկայացվել են առաջարկություններ բնակավայրերը բնորոշող հասկացությունների շրջանակի վերանայման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակավայրերի իրավական կարգավիճակի սահմանման սկզբունքների և դրանց կիրարկման վերաբերյալ:

**Նյութեր և մեթոդներ**

Մեր երկրում բնակավայրերը բնորոշելիս օգտագործվել են մի շարք եզրույթներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս ինչպես բնակավայրի մեծության, այնպես էլ դրա կարգավիճակի մասին: Այդ մոտեցումը որոշակի դրսևորումներ է ունեցել նաև Խորհրդային Հայաստանում, որի վարչատարածքային կառուցվածքը տրոհված էր երկու կարգերի, որոնցից առաջինում ընդգրկված էր 21 հանրապետական ենթակայության քաղաք, իսկ երկրորդում՝ 6 շրջանային ենթակայության քաղաք և 31 քաղաքատիպ ավան [13]:

Նկատենք, որ ներկայումս քաղաքի կարգավիճակ ունեցող Ագարակը, Ախթալան, Այրումը, Ապարանը, Բերդը, Բյուրեղավանը, Դաստակերտը, Եղեգնաձորը, Թալինը, Թումանյանը, Ճամբարակը, Մասիսը, Մարալիկը, Մարտունին, Մեծամորը, Նոյեմբերյանը, Նոր Հաճնը, Շամլուղը, Վայքը, Վեդին ու Վարդենիսը 1987 թ. ունեին քաղաքատիպ ավանի կարգավիճակ, իսկ Եղվարդը՝ ավանի: Քաղաքատիպ ավանի կարգավիճակ ունեին նաև ներկայումս գյուղի դասակարգում ունեցող Ագատամուտը, Անիպեմզան, Արագածավանը, Արզնին, Գագարինը, Լուսակերտը, Ձորագետը, Նոր Խարբերդը, Պեմզաշենը, Շիրակամուտը, Բաղրամյանը: Բացի այդ, ավանի կամ բանավանի կարգավիճակ ունեին տարբեր երկաթուղային կայարաններին և արտադրական ձեռնարկություններին կից կառուցված մի շարք բնակավայրեր (օրինակ՝ Անի, Արջուտ, Ջաջուտ, Փամբակ կայարաններին կից ավաններ, Վեդու գինու գործարանին կից, Շահումյանի թռչնաբուծարանին կից, Փայտամշակման գործարանին կից բանավաններ և այլն):

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում բնակավայրերի կարգավիճակը բնորոշող եզրույթները («քաղաք», «քաղաքատիպ ավան», «բանավան», «ավան» և «գյուղ») որոշակի պատկերացում էին տալիս ոչ միայն բնակավայրերի մեծության կամ նշանակության, այլև բնակչության հիմնական զբաղվածության մասին: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ Օրենքի համաձայն, ներկայումս մեր երկրում կա 1002 բնակավայր (ներառյալ Երևանը), որոնցից 49-ն ունի քաղաքի կարգավիճակ, 953-ը՝ գյուղի (աղ. 2):

Օրենքի հավելվածում ընդգրկված է 37 բնակավայր (որոնցից 12-ը՝ Սյունիքի և 7-ը՝ Վայոց Ձորի մարզերում), որոնք չունեն մշտական բնակչություն [14], և թերևս դրանով է պայմանավորված, որ 2015 թ. օրենքում կատարված փոփոխությամբ բնակավայրի սահմանումից հանվել է «մշտական» բառը [15], ինչը պատշաճ հիմնավորում չունեցող բացթողում է, որովհետև մեր երկրում կան հարյուրավոր պատմական բնակատեղիներ, ինչպես նաև կառուցապատված և այլ բնակավայրերից տարածքային առումով տարանջատված այգեգործական ընկերությունների տարածքներ, որոնք չունեն մշտական բնակչություն, հետևաբար, չեն դիտարկվում որպես բնակավայր:

*Աղյուսակ 2*

*ՀՀ մարզերում բնակավայրերի թիվն ըստ կարգավիճակի*

Հ/հ	Մարզ	Բնակավայրերի թիվը		
		ընդամենը	քաղաք	գյուղ
1	Արագածոտն	121	3	118
2	Արարատ	99	4	95
3	Արմավիր	98	3	95
4	Գեղարքունիք	98	5	93
5	Լոռի	128	8	120
6	Կոտայք	68	7	61
7	Շիրակ	130	3	127
8	Սյունիք	139	7	132
9	Վայոց ձոր	55	3	52
10	Տավուշ	65	5	60
	Ընդամենը	1001	48	953

Կարծում ենք, որ «բնակավայր» հասկացությունը նշված տարածքներից տարբերվում է հենց մշտական բնակչության առկայությամբ: Հետևաբար, մշտական բնակչություն չունեցող տարածքները բնակավայրերի ցանկում ներառելը որևէ կերպ չի առնչվում երկրի վարչատարածքային կառուցվածքի տրամաբանությանը:

Այսուհանդերձ, առանցքային հարցերը, որոնք կապված են բնակավայրերի կարգավիճակի հետ, հետևյալն են.

- ի՞նչ չափանիշների հիման վրա բնակավայրերը պետք է ստանան քաղաքի կամ գյուղի կարգավիճակ,
- արդյո՞ք «քաղաք» և «գյուղ» հասկացությունները բավարար են բոլոր բնակավայրերը բնորոշելու համար:

Ինչպես ցույց է տալիս արտերկրի և Հայաստանի պատմական փորձը, բնակավայրերի կարգավիճակը որոշելիս հաշվի են առնվել նախ և առաջ քանակական ցուցանիշները (բնակավայրի մեծությունը՝ բնակչության թիվը կամ խտությունը), ապա գործառույթները, ինչպես նաև բնակչության զբաղվածության բնույթը: Առանձին դեպքերում այդ գործոնները համատեղվել են:

Հաշվի առնելով շարադրվածը, հարկ է ներկայացնել և գնահատել Հայաստանի բնակավայրերի նկարագիրն ըստ նշված գործոնների:

### *1. Քանակական ցուցանիշներ*

#### *ա) բնակչության թիվը*

Հայաստանի 49 քաղաքներից 6-ի բնակչության թիվը պակաս է 2 հազարից (Դաստակերտ՝ 281, Շամլուղ՝ 602, Թումանյան՝ 1448, Ծաղկաձոր՝ 1172, Այրում՝ 1795, Ախթալա՝ 1951): Եվս 5 քաղաքի բնակչության թիվը գտնվում է 2...5 հազարի միջակայքում (Թալին՝ 4019, Ջերմուկ՝ 4070, Ագարակ՝ 4072, Մեղրի՝ 4234, Նոյեմբերյան՝ 4517): Խոշոր քաղաքներից Վանաձորի բնակչության թիվը 76860 է, Գյումրիինը՝ 112108: Մնացած 35 քաղաքների բնակչության թիվը 5...50 հազարի միջակայքում է [14]: Աղ. 3-ում ներկայացված են նվազագույն և առավելագույն բնակչության թվաքանակ ունեցող գյուղերի թիվն ըստ մարզերի: Աղյուսակից երևում է, որ հանրապետության 31 գյուղերի բնակչությունն ավելին է, քան 11 քաղաքներինը, ինչը խոսում է այն մասին, որ բնակավայրերի դասակարգման ժամանակ միայն բնակչության թվաքանակով ղեկավարվելն իսկական խառնաշփոթ կստեղծի ոլորտում:

Բացի այդ, բերված թվերն ակնհայտորեն ցույց են տալիս մեր երկրի տարածքային զարգացման ցցուն անհամամասնությունները: Այսպես, Սյունիքի մարզի գյուղերի ավելի քան 9% չունի մշտական բնակչություն, իսկ 45,5%-ի բնակչությունը պակաս է 200-ից, միաժամանակ, մարզում չկա 5000-ից ավել բնակիչ ունեցող ոչ մի գյուղ: Մոտավորապես նույն պատկերն է Վայոց ձորի մարզում: Դրան հակառակ, խոշոր գյուղերը մեծ տոկոս են կազմում Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում: Այսուհանդերձ, բերված թվերի վերլուծությունն այլ հետազոտության առարկա է, նշենք միայն, որ մեր նախկին հետազոտությունները ցույց են տվել, որ 5000-ից պակաս բնակիչ ունեցող բնակավայրերում խնդրահարույց է դառնում կառավարման և ծառայությունների մատուցման արդյունավետությունը [16], որոնք նույնպես կարող են դիտարկվել որպես բնակավայրերի կարգավիճակը բնորոշող գործոններ:

Նվազագույն և առավելագույն բնակչության քանակ ունեցող գյուղերի թիվն ըստ մարզերի

Հ/հ	Մարզ	Գյուղերի թիվը			
		մշտ. բնակ. չունեցող	մինչև 100 բնակիչ	101...200 բնակիչ	5000-ից ավել բնակիչ
1	Արագածոտն	2	7	10	3
2	Արարատ	1	0	4	4
3	Արմավիր	0	0	2	3
4	Գեղարքունիք	4	4	8	9
5	Լոռի	1	15	12	2
6	Կոտայք	0	2	1	7
7	Շիրակ	5	11	13	2
8	Սյունիք	12	41	19	0
9	Վայոց ձոր	7	4	7	1
10	Տավուշ	2	0	2	0
	Ընդամենը	34	84	78	31

*բ) Բնակչության խտությունը*

Համաձայն Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի եվրոպական ստատիստիկների հանձնարարականների, քաղաք կարող է համարվել այն բնակավայրը, որի բնակչության խտությունը *քառ. կմ*-ի վրա 300 մարդուց ավելին է, իսկ բնակչության թիվը՝ 5000 մարդուց [3]:

Քանի որ ՀՀ քաղաքների զբաղեցրած (կառուցապատված) և այդ նպատակի համար նախատեսված տարածքների վերաբերյալ պաշտոնական ամփոփ աղբյուրները բացակայում են, համապատասխան տվյալները ստացվել են google.com/maps/ կայքի քարտեզների (նկար) հիման վրա քաղաքներից բնակչության ամենամեծ խտության ցուցանիշներ ունեն Բյուրեղավանը (7000 *մարդ/քառ.կմ*), Չարենցավանը և Նոր Հաճնը (5200-ական *մարդ/ քառ.կմ*), իսկ ամենացածր ցուցանիշները՝ Արտաշատը (1000 *մարդ/քառ.կմ*), Սպիտակը (1100 *մարդ/քառ.կմ*) և Ճամբարակը (1400 *մարդ/քառ.կմ*): Բնակչության խտության ամենափոքր ցուցանիշներն ունեն Ծաղկաձորը, Շամլուղը և Դաստակերտը (համապատասխանաբար, 600, 800 և 900 *մարդ/քառ.կմ*):

Ասվածից հետևում է, որ բնակչության խտության նվազագույն ցուցանիշներին համապատասխանում են մեր երկրի բոլոր քաղաքները, սակայն բնակչության թիվը հաշվի առնելու պարագայում դրանցից 11-ը չեն համապատասխանի այդ ցուցանիշին:

*2. Գործառույթային ցուցանիշ կամ ենթակառուցվածքներով ապահովվածություն*

«Քաղաք» հասկացության բնորոշումը չի սահմանափակվում միայն բնակչության քանակով և բնակիչների՝ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ: Քաղաքը գյուղից տարբերակող հատկանիշներից մեկը բնակչության զբաղվածության և բնակիչներին մատուցվող ծառայությունների լայն շրջանակն է, ինչը ենթադրում է որոշակի ենթակառուցվածքների առկայություն:



**Նկ. Թալին քաղաքի տարածքի հաշվարկի համար կազմված ուրվագիծ**

Ծառայությունների շրջանակի ընտրությունը չի պայմանավորվելու միջազգային փաստաթղթերով ընդունված սոցիալական առաջընթացի ցուցիչներով [17], այլ առանձնացվելու է դրանց այն շրջանակը, որը ենթադրում է բնակչությանն այդ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ոչ միայն առաջնային կարիքները, այլև զարգացման հնարավորություններն ապահովող ենթակառուցվածքների առկայությունը:

Չենք անդրադառնալու նաև այն ենթակառուցվածքներին, որոնք պետական կամ համայնքային գործառույթ չեն հանդիսանում և պայմանավորված են մասնավոր հատվածի ներդրումներով և պահանջարկ-առաջարկ հարաբերությամբ (մանրածախ և մեծածախ առևտուր, հանրային սնունդ, հյուրանոցային ու զվարճությունների բիզնես, նոտարական, բանկային ծառայություններ, արտադրական ձեռնարկություններ և այլն):

Որպես բնակչության առաջնային կարիքներ դիտարկվել են.

- կոմունալ-կենցաղային ծառայությունները (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, կապ),
- նախադպրոցական և հիմնական կրթությունը (մանկապարտեզ, տարրական և հիմնական դպրոց),
- առաջնային բուժօգնությունը (բուժկետ, ամբուլատորիա):

Բնակչության առաջնային կարիքների շրջանակում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ըստ անհրաժեշտության մատուցվող ծառայությունների (շտապ բուժօգնություն, վթարային, հրշեջ և փրկարար ծառայություններ, ոստիկանություն) հասանելիությունը:

Բնակչության զարգացման հնարավորություններն ու բարեկեցության հիմքերն ապահովող ենթակառուցվածքներից առավել կարևորներն են.

- միջնակարգ և արտադպրոցական (երաժշտություն, կերպարվեստ, սպորտ, արհեստագործություն, տեխնիկա, տեխնոլոգիաներ) կրթությունը,

- առողջապահական հաստատությունները (պոլիկլինիկա, հիվանդանոց, առողջության կենտրոն),
- մշակութային հաստատությունները (ակումբ, մշակույթի տուն, մարզամշակութային համալիր, թատրոն և այլն),
- բնակչության հանգստի և ժամանցի համար նախատեսված ընդհանուր օգտագործման հանրային տարածքները,
- բնակչության ներքին և արտաքին տեղաշարժերն ապահովող փողոցաճանապարհային ցանցի առկայությունը,
- վարչակառավարչական ենթակառուցվածքները,
- համացանցի առկայությունը:

Ըստ այդմ, գնահատման կարիք ունի այն հարցը, թե Հայաստանի Հանրապետության արդյո՞ք բոլոր քաղաքներն են ապահովված վերը նշված ենթակառուցվածքներով:

### *3. Բնակչության զբաղվածության բնույթը*

Բնակավայրերի կարգավիճակը որոշելիս պատմականորեն ընդունված չափանիշներից մեկը բնակչության զբաղվածությունն է: Ի տարբերություն քաղաքների, գյուղերի բնորոշումը, անկախ դրանց բնակչության թվաքանակից, պայմանավորվում է այն առանցքային հանգամանքով, որ դրանց բնակչության զբաղվածության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է (հողագործություն, անասնապահություն և այլն):

Հայաստանի Հանրապետության պարագայում հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ գյուղի կարգավիճակ ունեցող երկու տասնյակից բնակավայրերի բնակչության զբաղվածությունը գյուղատնտեսությունը չէ, քանի որ դրանք կազմավորվել են առանձին արդյունաբերական օբյեկտների կամ երկաթուղային կայանների սպասարկման համար: Բնականաբար, այդ բնակավայրերի բնակչությունը հողերի սեփականաշնորհման ժամանակ չի ստացել գյուղատնտեսական նշանակության հողամասեր: Նման վիճակում են Արջուտ կայարանը, Փոքր Այրումը, Փամբակը, Ձորագետը, Անիավանը, Ջաջուռավանը, Ագատամուտը, Աճարկուտը և այլն:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կարգավիճակին առնչվող խնդիրներն ընդհանրացնելու պարագայում անհրաժեշտ է փաստել, որ ինչպես բազմաթիվ քաղաքներ, այնպես էլ գյուղեր չեն համապատասխանում բնակչության թվաքանակին, ենթակառուցվածքների առկայությանը և բնակչության զբաղվածությանն առնչվող ընդունված չափանիշներին:

### **Արդյունքներ և քննարկում**

Ինչպես արդեն նշվել է, բնակավայրերի կարգավիճակի որոշման կամ սահմանման համընդհանուր կիրառման սկզբունքները բացակայում են և յուրաքանչյուր երկիր խնդիրը լուծում է՝ ելնելով իր կուտակված պատմական փորձից և առանձնահատկություններից:


Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, այստեղ ոչ միայն սահմանված չեն բնակավայրերի կարգավիճակի որոշման սկզբունքները, այլև անտեսված են պատմականորեն ձևավորված որոշակի յուրահատկությունները: Նշված ոլորտը կանոնակարգելու նպատակով նախ ընդհանրացվել են սույն հետազոտության ընթացքում ներկայացված առանցքային խնդիրները.

- ա) մեր երկրում կան քաղաքներ, որոնց բնակչությունը պակաս է 5 հազարից և որոնք ապահովված չեն հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներով,
- բ) կան գյուղի կարգավիճակ ունեցող բնակավայրեր, որոնց բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսությունը չէ,
- գ) կան նաև բնակավայրեր, որոնց բնակչությունը պակաս է 5 հազարից, սակայն դրանցում պատմականորեն ձևավորվել են բնակչության ոչ միայն առաջնային կարիքները, այլև զարգացման հնարավորություններն ապահովող ենթակառուցվածքներ,
- դ) վերը շարադրվածը հաշվի առնելով, հարկ է արձանագրել, որ միայն «քաղաք» և «գյուղ» հասկացությունները բավարար չեն՝ բնակավայրերի կարգավիճակը և առանձնահատկությունները բնորոշելու համար:

Նկատի ունենալով մեր երկրի պատմական փորձը և առանձնահատկությունները, առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանել բնակավայրերի 5 տարակարգ՝ ըստ 4-րդ աղյուսակում ներկայացված չափանիշների:

Աղյուսակ 4

ՀՀ բնակավայրերի տարակարգման առաջարկվող մոդել



Հաշվի առնելով ընտրված չափանիշները՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տարակարգման հիմքում դրվել են հետևյալ սկզբունքները.

1) բնակչության առաջնային կարիքները, զարգացման հնարավորություններն ու բարեկեցության հիմքերն ապահովող ենթակառուցվածքներ, 50 *հազարից* ավելի բնակիչ, ինչպես նաև բնակչության՝ ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ունեցող բնակավայրերը ստանում են «ոստանի» կարգավիճակ (այդ չափանիշներին համապատասխանում է 2 բնակավայր): Երևանը նույնպես համապատասխանում է նշված չափանիշներին, սակայն ավելի նպատակահարմար է այս պարագայում «ոստան» եզրույթի փոխարեն կիրարկել համընդհանուր տարածում գտած՝ «մայրաքաղաք» եզրույթը,




2) նույն պայմաններին բավարարող, սակայն 10...50 *հազար* բնակիչ ունեցող բնակավայրերը ստանում են «քաղաքի» կարգավիճակ (նման կարգավիճակ կունենա 24 բնակավայր): Ըստ էության, այս տարակարգը համապատասխանում է ՀՀ շինարարական նորմերով սահմանված՝ «փոքր քաղաք» ձևակերպմանը [12].

3) նույն պայմանները բավարարող, սակայն մինչև 10 *հազար* բնակիչ ունեցող բնակավայրերը ստանում են «քաղաքատիպ ավանի» կարգավիճակ (այդ տարակարգում կընդգրկվի ներկայումս «քաղաքի» կարգավիճակ ունեցող 16 բնակավայր):

Վերը նշված տարակարգերում ընդգրկվող բնակավայրերի ցանկը ներկայացված է աղ. 5-ում:

*Աղյուսակ 5*

*«Ոստանի», «քաղաքի» և «քաղաքատիպ ավանի» կարգավիճակ ստացող բնակավայրերի ցանկ*

ՈՍՏԱՆ		1	Գյումրի				
		2	Վանաձոր				
ՔԱՂԱՔ		1	Աբովյան	9	Գորիս	17	Չարենցավան
		2	Ալավերդի	10	Դիլիջան	18	Սիսիան
		3	Աշտարակ	11	Եղվարդ	19	Սպիտակ
		4	Արարատ	12	Իջևան	20	Ստեփանավան
		5	Արթիկ	13	Կապան	21	Սևան
		6	Արմավիր	14	Հրազդան	22	Վաղարշապատ
		7	Արտաշատ	15	Մասիս	23	Վարդենիս
		8	Գավառ	16	Մարտունի	24	Վեդի
ՔԱՂԱՔԱՏԻՊ ԱՎԱՆ		1	Ագարակ	9	Մեծամոր		
		2	Ապարան	10	Մեղրի		
		3	Բերդ	11	Նոյեմբերյան		
		4	Բյուրեղավան	12	Նոր Հաճն		
		5	Եղեգնաձոր	13	Ջերմուկ		
		6	Թալին	14	Վայք		
		7	Ճամբարակ	15	Տաշիր		
		8	Մարալիկ	16	Քաջարան		

4) բնակչության առաջնային կարիքները բավարարող ենթակառուցվածքներ, մինչև 2000 բնակիչ, ինչպես նաև բնակչության՝ ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ունեցող բնակա-

վայրերը ստանում են «ավանի» կարգավիճակ (այդ տարակարգում կընդգրկվեն ներկայումս «քաղաքի» կարգավիճակ ունեցող Ախթալան, Այրումը, Դաստակերտը, Թումանյանը, Ծաղկաձորը և Շամլուղը): Միաժամանակ, նման կարգավիճակ կստանան մինչև 2000 բնակիչ ունեցող և ներկայումս «գյուղի» դասակարգում ունեցող այն բնակավայրերը, որոնց բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսությունը չէ, օրինակ՝ Արջուտ, Քոբեր, Փամբակ կայարաններին և Առողջարանին կից ավանները Լոռիում, Ջաջուռավանը, Հացիկավանը, Աղին և Ախուրյան կայարաններին կից ավանները Շիրակում և այլն: Դրանց վերջնական ցանկերը պետք է քննարկման առարկա դառնա տարածքային կառավարման մարմինների և խոշորացված համայնքների մակարդակում,

5) անկախ բնակչության թվաքանակից, «գյուղի» տարակարգում կընդգրկվեն բոլոր այն բնակավայրերը, որոնք կարող են բավարարել բնակչության առաջնային կարիքները և որոնց բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսական գործունեությունն է:

Ներկայացված առաջարկությունները չեն բացառում, որ պետությունը կարող է առանձին դեպքերում կիրառել այլ մոտեցումներ՝ հաշվի առնելով բնակավայրերի դերը, տարաբնակեցման համակարգի բազմակենտրոն կառուցվածք ձևավորելու անհրաժեշտությունը, բնակավայրի պատմական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը և այլն:

Բացի այդ, նկատի ունենալով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդգրկումը շրջանակը [18] և դրանց ուղղակի առնչությունները վարչակառավարչական և հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքների հետ, համայնքի կենտրոնի իրավական կարգավիճակ կարող են ունենալ միայն քաղաքները և քաղաքատիպ ավանները: Բացառություն կարող են կազմել, թերևս, ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղերը:

### **Եզրակացություն**

Բնակավայրի կարգավիճակին առնչվող արտերկրի, հայրենական պատմական փորձի, ինչպես նաև միջազգային փաստաթղթերի և գիտական հրապարակումների վերլուծությունները ցույց են տալիս, որ ներկայումս բացակայում են «քաղաք» և «գյուղ» հասկացությունների սահմանման միասնական և համընդհանուր կիրառման սկզբունքները: Միաժամանակ, Հայաստանի բնակավայրերի բնակչության թվի, գործառնության ուղղվածության և բնակչության զբաղվածության ուսումնասիրությունները վկայում են, որ միայն վերը նշված հասկացությունները բավարար չեն բնորոշելու մեր երկրի բնակավայրերի առանձնահատկությունները:

Հաշվի առնելով նշված հանգամանքը, առաջարկվել է բնակավայրերը դասակարգելիս բացի «քաղաք» և «գյուղ» հասկացություններից կիրառության մեջ դնել նաև «ոստան», «քաղաքատիպ ավան» և «ավան» հասկացությունները:

Բացի այդ, ընտրված երեք առանցքային ցուցանիշների՝ բնակչության թվի, ենթակառուցվածքների շրջանակի և գրադավաճության հիման վրա մշակվել է բնակավայրերի իրավական կարգավիճակի սահմանման մոդել, ինչը թույլ կտա ոչ միայն այդ ցուցանիշների համադրումներով հստակորեն տարանջատել բնակավայրերն ըստ կարգավիճակի, այլև որոշակի պատկերացում կտա բնակավայրերի գործառնության ուղղվածության մասին:

### Գրականության ցանկ

- [1] **М. Вебер**, История хозяйства. Город, Пер. с нем. «КАНОН-пресс-Ц», «Кучково поле», Москва, 2001.
- [2] **L.Dijkstra, E.Hamilton, S.Lall, S.Wahba**, How do we define cities, towns, and rural areas? Available from: <<https://blogs.worldbank.org/sustainablecities/how-do-we-define-cities-towns-and-rural-areas>>.
- [3] Европейская экономическая комиссия. Конференция европейских статистиков. Категории переписного населения и географические признаки – проект текста для рекомендаций Конференции европейских статистиков по проведению раунда переписей 2020 г. Режим доступа: <[https://unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/ge.41/2014/mtg2/7\\_R.pdf](https://unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/ge.41/2014/mtg2/7_R.pdf)>.
- [4] **V. Gordon Childe**, The Urban Revolution Author(s), The Town Planning Review 21(1) (Apr., 1950) 3-17. Available from: <<http://www.jstor.org/stable/40102108?origin=JSTOR-pdf>>.
- [5] **Е.В. Соловьев**, Статус города: правовые основания присвоения, Марийский юридический вестник 11 (2014) 74-79.
- [6] **В.И. Гуляев**, Города-государства Майя. Структура и функции города в раннеклассовом обществе. Наука, Москва, 1979, 304 с.
- [7] **Ле Корбюзье**, Архитектура XX века. Прогресс, Москва, 1970, 304с.
- [8] **О.К. Трубицын**, Что такое город? Сибирский философский журнал 18(4) (2020) 77-90.
- [9] **Д.М. Казарян**, Историко-правовые предпосылки формирования и этапы развития правового статуса города Еревана, Журн.: Историческая и социально-образовательная мысль/Рубрика: Исторические науки 4-1(8) (2016) 70-74.
- [10] Նոր բառագիրք հայկազեան լեզուի. Տպարան ի սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836. Էլեկտրոնային հղում. <[http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt=HY\\_HY&pageNumber=26](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt=HY_HY&pageNumber=26)>:
- [11] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Էլեկտրոնային հղում. <<https://www.arlis.am/documentview.aspx?docid=240>>:
- [12] **ՀՀՇՆ 30-01-2014**. Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում:
- [13] Հայկական սովետական հանրագիտարան. Սովետական Հայաստան. ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1987:

- [14] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կայքէջ /հրապարակումներ/ Տարածքային վիճակագրություն. Էլեկտրոնային հղում.  
</https://armstat.am/am/?nid=651>:
- [15] «Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին». Էլեկտրոնային հղում. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102849>:
- [16] **S.Tovmasyan, Y.Safaryan**, The problems of accessibility of public services and transport links, caused by the geographical location of the cities in the Republic of Armenia, in: Proceedings of 7-th International Conference Contemporary Problems of Architecture and Construction. Florence, Italy, 2015, pp. 533-538.
- [17] 2021. Social Progress Index. Available from: <https://www.socialprogress.org/resources>.
- [18] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՕ-337, ՀՀՊՏ 2002.06.21/21(196):

## СТАТУС НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ: ПРОБЛЕМЫ И ВОЗМОЖНЫЕ РЕШЕНИЯ

**Սարգիս Արիստակեսովիչ Տովմասյան\*, Արսեն Արսենովիչ Արուստամյան, Գայկ Կարենովիչ Յիրակյան**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА*

*\*tosar@mail.ru*

*В статье представлены проблемы, связанные со статусом населенных пунктов как за рубежом, так и в Республике Армения. Обосновано, что практикуемая в настоящее время в нашей стране классификация населенных пунктов, ограничивающаяся лишь понятиями «город» и «село», не имеет отношения к отечественному историческому опыту, кроме того, еще не определены принципы присвоения статуса населенным пунктам. На основе практикуемого за рубежом опыта выбраны основные показатели, характеризующие населенные пункты: численность населения, наличие инфраструктуры, обеспечивающей общественные услуги и основная занятость населения. На основе этих показателей проведены анализ и оценка общей картины населённых пунктов РА. В результате анализа, для определения характера населенных пунктов предложено использовать не только понятия “город” и “село”, но и “востан” (крупный, центральный город), “поселок городского типа” и “поселок”. В соответствии с указанными понятиями и выбранными критериями разработана новая модель классификации поселений. Представлены основные изменения и дополнения к существующей классификации населенных пунктов в результате реализации предложенной модели. Предложения могут найти применение в рамках изменений и дополнений нормативно-правовых актов, определяющих правовой статус населенных пунктов республики.*

**Ключевые слова:** *поселок, город, село, инфраструктура, численность населения, занятость*

## THE STATUS OF RESIDENCES: MAIN PROBLEMS AND POSSIBLE SOLUTIONS

**Sargis Tovmasyan\*, Arsen Arustamyan, Hayk Ziraqyan**

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA*

\*tosar@mail.ru

*The article presents the issues related to the status of settlements both abroad and in the Republic of Armenia. It was argued that the classification of settlements currently implemented in our country, limited only to the concepts of "city" and "village", does not correspond to the domestic historical experience, besides, the principles of granting the status of settlements have not yet been defined. On the basis of the experience implemented abroad, the key indicators characterizing the settlements were selected: the number of the population, the availability of infrastructures providing public services and the main employment of the population, analyzing and evaluating the general image of the RA settlements according to these indicators. As a result of the analysis, it was proposed to use not only "city" and "village", but also "vostan"(Big City), "urban-type settlement" and "township" to define settlements. A new settlement classification model was developed according to the mentioned concepts and selected criteria. The main changes and additions to the existing classification of settlements as a result of the implementation of the proposed model are presented. The proposals can be applied within the framework of amendments and additions to the legal acts that determine the legal status of the settlements of the republic.*

**Keywords:** settlement, city, village, infrastructure, population, employment

**Թովմասյան Սարգիս Արխաստակեսի, ճ. դ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Գիտության վարչության  
 ղեկավար, (+374)91427599, tosar@mail.ru, **Առուստամյան Արսեն Արսենի, ճ. դ., պրոֆեսոր** (ՀՀ,  
 ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Քաղաքաշինության ամբիոն, (+374)91414229, arustamyanarsen@yahoo.com,  
**Զիրաքյան Հայկ Կարենի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետության ֆակուլտետ, մագիստրանտ,  
 (+374)44664846, ziraqyanm1@gmail.com

**Товмасын Саргис Арустамесович, д-р архит., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, Руководитель управления  
 науки, (+374)91427599, tosar@mail.ru, **Арустамян Арсен Арсенович, д-р архит., проф.** (РА, г. Ереван) -  
 НУАСА, кафедра Градостроительства, (+374)91414229, arustamyanarsen@yahoo.com, **Зиракян Гайк  
 Каренович** (РА, г. Ереван) - НУАСА, факультет Архитектуры, магистрант, (+374)44664846,  
 ziraqyanm1@gmail.com

**Tovmasyan Sargis, Doctor of Science (architecture), Associate Professor** (RA, Yerevan)- NUACA, Head of  
 Science Department, (+374)91427599, tosar@mail.ru, **Arustamyan Arsen, Doctor of science (architecture),  
 prof.** (RA, Yerevan) - NUACA, Chair of Urban Planning, (+374)91414229, arustamyanarsen@yahoo.com,  
**Ziraqyan Hayk** (RA, Yerevan) - NUACA, Faculty of Architecture, Master student (+374)44664846,  
 ziraqyanm1@gmail.com

Ներկայացվել է՝ 28.12.2022թ.

Գրախոսվել է՝ 23.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՊՍՍԱՀԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՂԵԼՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Գարիկ Վարուժանի Խաչատրյան՝ Արմեն Վալերիկի Հարությունյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*gkhachatryan@gmexpertise.am*

Հոդվածում քննարկվում է ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) վերլուծության և մոդելավորման համար ժամանակակից մեթոդների՝ համակարգչային ծրագրերի կիրառումը, որոնք հնարավորություն կտան ՃՏՊ-ների վերականգնման ժամանակ ապահովել հաշվարկների ավելի բարձր ճշգրտություն: Ներկայացվում են համակարգչային տարբեր ծրագրեր (PC-CRASH, V-CRASH, V-SIM, CARAT), որոնցից PC-CRASH-ը ամենատարածվածներից և գործողներից մեկն է՝ ՃՏՊ-ների վերլուծության և մոդելավորման համար: Հոդվածում դիտարկվում են այդ ծրագրի ընդհանուր բնութագիրը, հաշվարկի մոդելների տեսակները, ծրագրի կիրառման հիմնական հնարավորությունները: ՀՀ-ում ՃՏՊ-ների վերլուծության և մոդելավորման համար համակարգչային ծրագրի ներդրումը հնարավորություն կտա ավելի արագ, բազմակողմանի և ճշգրիտ հետազոտել պատահարների մեխանիզմները:

**Բանալի բառեր.** համակարգչային ծրագրեր, մոդելավորում, փորձագետ, ավտոտեխնիկ, պատահար, ավտոմոբիլ, փորձաքննություն

### Ներածություն

Ճանապարհատրանսպորտային պատահարին (ՃՏՊ) մասնակից վարորդի մեղավորության առկայության և դրա աստիճանը որոշելու համար քննիչին և դատարանին անհրաժեշտ է լուծել վարորդի գործողությունների և տեղ գտած հետևանքների միջև պատճառական կապի հարցը, այսինքն որոշել՝ հանդիսացել են արդյոք վարորդի գործողությունները պատահարի պատճառ կամ վերջինս ստեղծել է պայմաններ, որի հետևանքով հնարավորություն է եղել դրա առաջանալուն, թե վարորդի գործողություններն ընդհանրապես պատճառական կապի մեջ չեն եղել պատահարի առաջացման հետ: Երևույթի պատճառական կապ հանդիսացող պայմանները կարող են բացահայտվել, եթե հայտնի են այդ երևույթի զարգացման օրինաչափությունները [1]:

ՃՏՊ-ների վերականգնման ժամանակ փորձագետի առջև դրված գլխավոր խնդիրն է հաշվարկների ճշգրտությունը, որը կարևոր գործոն է հանդիսանում եզրակացությունների ձևակերպման հավաստիության որոշման համար: Իր հերթին եզրակացությունների հավաստիությունից կարող է կախված լինել ՃՏՊ-ին այս կամ այն մասնակցի մեղավորության աստիճանը: Իրականացված հաշվարկների ճշգրտության և ավտոտեխնիկական եզրակացության հավաստիության խնդիրը վերջին ժամանակներս դարձել է ավելի հրատապ, որը հատկապես կապված

է նյութական և բարոյական մեծ փոխհատուցումների (արտահայտված դրամներով) աճող միտումների հետ: Այդ իսկ պատճառով, ՀՀ-ում ներկայումս ավտոտեխնիկական փորձաքննությունների իրականացման գործում պահանջվում է կիրառել մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն ոչ միայն իրականացվող հաշվարկների անհրաժեշտ ճշգրտությունը, այլ նաև հնարավորություն կտան բազմակողմանի հետազոտել տեղի ունեցած ՃՏՊ-ն [2, 3]:

### **Նյութեր և մեթոդներ**

Եվրոպական երկրներում ավտոտեխնիկական հետազոտությունը, կիրառելով մասնագիտացված համակարգչային ծրագրեր, հանդիսանում է ստանդարտ գործելաձև, ինչպես ՃՏՊ-ների մեխանիզմի մոդելավորման, այնպես էլ դրա ակնառության համար, որը հնարավորություն է տալիս ոչ միայն բազմակողմանի իրականացնել հետազոտությունը, այլ առավել հասկանալի և տեսանելի ձևով ներկայացնել դրա արդյունքները: ՃՏՊ-ների վերլուծության համար այդ մասնագիտացված համակարգչային ծրագրերը գնահատվում են որպես մեխանիկայի հայտնի օրենքների համակարգչային մեկնակերպերը (версия), ինչպես նաև ավտոմոբիլների դինամիկայի և հարվածի մեխանիկայի բնագավառի հիմնավոր հետազոտությունների հիմքը: Եվրոպական երկրներում այդպիսի ծրագրերի կիրառումը որպես կանոն չի պահանջում ինչ որ հավաստագրում կամ որակի ստուգում, ավտոտեխնիկ փորձագետն ազատ է մեթոդիկայի ընտրության հարցում և կրում է պատասխանատվություն իրականացված հետազոտության գիտականության և օբյեկտիվության համար [4, 5]:

ՀՀ-ում Արդարադատության նախարարությունը և ոստիկանությունը հիմնականում աշխատում են դեռևս տարիներ առաջ հաստատված մեթոդներով: Այդ մեթոդների մաթեմատիկական մոդելը մեխանիկայի տարրական դասական օրենքների կիրառումն է, որը բարձր ճշգրտություն չի կարող ապահովել: Համակարգչային ծրագրերը (PC-CRASH, V-CRASH, V-SIM) մեզ մոտ դեռևս լայն տարածում չեն գտել: Փորձագետներն իրենց գործառնություններում կիրառելով ՃՏՊ-ների վերլուծության համար մասնագիտացված ծրագրերը, հաճախ որոշակի դժվարությունների են բախվում, երբ անհրաժեշտ է հիմնավորել իրականացված հետազոտության ապացուցող ուժը:

Այդ իսկ պատճառով մեր հանրապետությունում նպատակահարմար է այդ բնագավառում նմանատիպ համակարգչային ծրագրերի լայն կիրառումը: Մինչ այսօր ՃՏՊ-ների վերլուծության և մոդելավորման համար «PC-CRASH» համակարգչային ծրագիրն ամենատարածվածներից և գործողներից մեկն է: «PC-CRASH» ծրագրում կիրառություն են գտել բախումների հաշվարկի մի քանի մոդելներ՝ հարվածի դասական, ինչպես նաև ավելի կատարելագործվածները՝ ուժային և ցանցային [4, 6]:


### **Արդյունքներ և քննարկում**

Ծրագրի կարևոր առավելությունը հանդիսանում է ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության պարամետրերի հաշվարկի հնարավորությունը շարժման ընթացքում՝ հաշվի

առնելով դրանց իրական պարամետրերը, ինչպես նաև շրջակա միջավայրը և ներագրող գործոնները: Բացի այդ, ծրագրում տեղ են գտել նաև հաշվարկի կինեմատիկական մոդուլները [6]:

Ներկայացնենք «PC-CRASH» ծրագրի գործառնական հիմնական հնարավորությունները [6, 7].

- անվանացանկի և գործիքների վահանակների բովանդակությունները կարող են ձևավորվել օգտագործողի կողմից՝ ըստ անհատական պահանջի, «Explorer Toolbar»-ի առկայությունը հնարավորություն է տալիս նախագծերի, մոդելավորման օբյեկտների, գրաֆիկական պատկերների արագ բեռնումը «տեղափոխել և թողնել» եղանակով,
- աշխատանքային նախագծերի ավտոմատ պահպանումը որոշակի ժամանակահատվածում, որը նախապես հաստատվել էր օգտվողի կողմից: Հետ վերադարձը վերջին գործողություններին ապահովում է մինչև 50 քայլ: Աշխատանքային նախագծերը կարող են պահպանվել և օգտագործվել ծրագրի ավելի հին տարբերակների (версии) կիրառման ժամանակ,
- տրանսպորտային միջոցների (SU) պարամետրերի բեռնման հնարավորություն՝ տվյալների ամբողջական բազայից, այստեղ լուսանկարների միջոցով ներկայացվում են տրանսպորտային միջոցների ընդհանուր տեսքերը, որը հնարավորություն է տալիս ավելի ստույգ ընտրել անհրաժեշտ մոդելը,
- համացանցի միջոցով մուտքի հնարավորություն «Recon Data» տվյալների բազա, որը պարունակում է տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների լուսանկարներ մասշտաբային քանոնով, DSD քրաշ-թեստերի արդյունքները և այլն,
- տրանսպորտային միջոցների մասշտաբային լուսանկարների օգտագործման հնարավորություն (մասշտաբային լուսանկարների բազա AUTOVIEW), որը թույլ է տալիս մասնագիտորեն կատարել հետքաբանական հետազոտություններ՝ համեմատելով և համադրելով վնասված տեղամասերի դիրքերը և չափերը (նկ. 1),



Նկ. 1. SU-ների լուսանկարներն ըստ մասշտաբային քանոնի



նաև բավականին բարձրացնել եզրակացությունների օբյեկտիվությունը և գիտական հիմնավորվածությունը [4, 5]:

Իրականացվող մոդելավորման նույնականացման հիմնական չափանիշ է հանդիսանում.

1. մոդելավորմամբ ստացված ավտոտրանսպորտային միջոցների դիրքերի համապատասխանությունը, որոնք վերականգնվել են ՃՏՊ-ի սխեմայի և լուսանկարների հիման վրա,
2. ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության հաշվարկային հետազոծերի համապատասխանությունն այն հետքերին, որոնք առաջացել են ՃՏՊ-ի վայրում,
3. ավտոմոբիլների վնասվածքների համապատասխանությունը նախնականին և հաշվարկայինին:


Բախումների վերլուծության ժամանակ ձևափոխման (դեֆորմացիայի) էներգիայի գնահատումը հիմնական հանգուցային գործողություններից մեկն է: Այդ առումով ծրագիրն ունի հետևյալ հնարավորությունները.

1. հաշվարկ «CRASH3» մոդուլի օգնությամբ,
2. ավտոմատացված հաշվարկ, կիրառելով վնասված ավտոմոբիլների լուսանկարները,
3. համեմատական գնահատումը, կիրառելով ծրագրում ինտեգրված քարտացուցակը:

Դիտարկենք պատահարի առաջացման պատճառների փորձաքննության օրինակ, որի դեպքում կիրառվել է PC-CRASH 12.0 համակարգչային ծրագիրը: Պատահարին մասնակից տրանսպորտային միջոցներն են TOYOTA և FORD մակնիշի ավտոմոբիլները: Փորձագետին առաջադրված փորձաքննության հարցերն են.

- կատարել պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն և տալ վերջնական եզրակացություն, թե որ ավտոմոբիլի վարորդի գործողություններով է պայմանավորված տվյալ պատահարի առաջացումը,
- պարզել ելակետային տվյալների համապատասխանությունը վթարի մեխանիզմին:

Փորձաքննությանը ներկայացված ՃՏՊ-ի սխեման ցույց է տրված նկ. 4-ում:



Նկ. 4. ՃՏՊ-ի սխեման

Դեպքի վայրի լուսանկարների դիտարկումից հետևում է, որ միմյանց բախվելու արդյունքում առաջացած վթարային բնույթի վնասվածքներ են կրում TOYOTA ավտոմոբիլի ձախ կողմի առջևի անկյունային շրջանին հարակից տարրերը և համապատասխանաբար, FORD ավտոմոբիլի առջևի աջ անկյունային շրջանի տարրերը (նկ. 5 ա, բ, գ, դ):



ա)



բ)




գ)



դ)

**Նկ. 5. ՃՏՊ-ին մասնակից TOYOTA և FORD ավտոմոբիլների հետվթարային դիրքերը (ա, բ) և վնասվածքների տեղակայությունները (գ, դ)**

Պատահարի մեխանիզմը ճշգրիտ վերակառուցելու նպատակով վերլուծությունը իրականացվել է PC-Crash 12.0 համակարգչային ծրագրով, հիմք ընդունելով փորձաքննությանը տրամադրված ելակետային տվյալները, մասնավորապես՝ ՃՏՊ սխեման, դեպքի վայրի լուսանկարները, ավտոմոբիլների հետվթարային դիրքերն ու դրանց հպումային տեղամասերը: Կազմվել է դեպքի վայրի էլեկտրոնային գծագիր և իրականացվել է համակարգչային եռաչափ մոդելավորում, որի արդյունքում ստացվել է ՃՏՊ-ի իրավիճակային գծագրերը (նկ. 6 ա, բ) [7, 8]:



ա)



բ)

**Նկ. 6. ՃՏՊ-իրավիճակային գծագրերը (ա, բ) մոդելավորման հավելվածներում**

Մոդելավորման արդյունքներից հետևում է, որ տվյալ բնույթի ՃՏՊ մեխանիզմի պայմաններում TOYOTA ավտոմոբիլի վարորդի կողմից հետադարձի մանևրը կարող էր իրականացվել տվյալ ուղղության երթևեկելի մասի առաջին աջ եզրային գոտուց: Ընդ որում, ձախ շրջադարձի մանևրումով հարևան երկրորդ երթևեկելի գոտի TOYOTA ավտոմոբիլի մուտք գործելու պահին FORD ավտոմոբիլի ընթացքի արագությունը կարող էր կազմել շուրջ 57 կմ/ժ: TOYOTA և FORD ավտոմոբիլների բախման պահին TOYOTA ավտոմոբիլի արագությունը կարող էր կազմել 12,7 կմ/ժ, իսկ FORD ավտոմոբիլի արագությունը՝ շուրջ 53 կմ/ժ (նկ. 6 ա, բ):

Հաշվի առնելով ՃՏՊ-ի մոդելավորման արդյունքները, ըստ ներկայացված ՃՏՊ մեխանիզմի, TOYOTA ավտոմոբիլի վարորդի գործողությունները ենթակա են տեխնիկական վերլուծության և գնահատման հետևյալ իրավական ակտերի նշված կետերի պահանջների՝ «Ճանապարհային երթևեկության մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին կետ, «Ճանապարհային երթևեկության

անվտանգության ապահովման մասին» ՀՀ Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մաս, «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների» հավելված 1-ի 36-րդ, 51-րդ և 60-րդ կետեր [9, 10]:

Վերը նշվածից հետևում է, որ TOYOTA ավտոմոբիլի վարորդը, երթևեկության անվտանգության ապահովման և տվյալ պատահարից խուսափելու նպատակով պետք է իրականացնէր երթևեկություն՝ հաշվի առնելով վերը նշված կետերի պահանջները, ձեռնպահ մնար ճանապարհի տվյալ մասում հետադարձ կատարելուց՝ չհատելով 1.3 ճանապարհային գծանշումը:

Ներկայացված ՃՏՊ մեխանիզմի պայմաններում FORD ավտոմոբիլի վարորդի գործողությունները նույնպես ենթակա են տեխնիկական վերլուծության և գնահատման՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ՃԵԿ) 67-րդ կետի պահանջներին համապատասխան: Այսինքն, FORD ավտոմոբիլի վարորդը, գնահատելով երթևեկության անվտանգության պայմանները, TOYOTA ավտոմոբիլի հետ ընդհարումը կանխելու նպատակով (համաձայն ՃԵԿ-ի 67-րդ կետի պահանջի) պետք էր ժամանակին կատարված արգելակմամբ իջեցնէր իր ավտոմոբիլի արագությունն, ընդհուպ կանգնեցնէր այն: Ինչպես հետևում է մոդելավորման արդյունքներից, ձախ շրջադարձի մանևրումով, հարևան ձախ երկրորդ երթևեկելի գոտի TOYOTA ավտոմոբիլի մուտք գործելու պահին FORD ավտոմոբիլը կարող էր գտնվել TOYOTA ավտոմոբիլի հետ բախման տեղից շուրջ 28 մ հեռավորության վրա: Տվյալ պահին FORD ավտոմոբիլի արագությունը կարող էր կազմել շուրջ 57 կմ/ժ: Մինչդեռ առկա պայմաններում FORD ավտոմոբիլը կանգնեցնելու համար վարորդին տեխնիկական տեսանկյունից անհրաժեշտ տարածությունը կազմել է շուրջ 43,7 մ: Նշված տարածությունը որոշվել է հետևյալ բանաձևով [11]՝

$$S_{a-2} = (t_{1-2} + t_{2-2} + 0,5 \cdot t_{3-2}) \cdot \frac{V_2}{3,6} + \frac{V_2^2}{26 \cdot j_2} \text{ մ},$$

որտեղ  $t_{1-2} = 1,0$  վ -ը ստեղծված ճանապարհատրանսպորտային իրադրությունում FORD ավտոմոբիլի վարորդի ռեակցիայի նորմատիվային ժամանակամիջոցի տևողությունն է,  $t_{2-2} = 0,1$  վ՝ FORD ավտոմոբիլի արգելակային համակարգի գործելու հապաղման նորմատիվային ժամանակամիջոցի տևողությունը,  $t_{3-2} = 0,35$  վ՝ FORD ավտոմոբիլի դանդաղեցման աճի նորմատիվային ժամանակամիջոցի տևողությունը,  $V_2 = 57$  կմ/ժ՝ FORD ավտոմոբիլի երթևեկության արագության մեծությունը վտանգ առաջանալու սկզբնապահին,  $j_2 = 5,7$  մ/վ<sup>2</sup>՝ FORD ավտոմոբիլի կայունացված նորմատիվային դանդաղեցումը կտրուկ արգելակելու դեպքում [11]:

Նշված տարածությունների մեծությունների համեմատությունից հետևում է, որ տվյալ պայմաններում FORD ավտոմոբիլի վարորդն, իր երթևեկության համար վտանգ առաջանալու պահից սկսած, այսինքն, ձախ մանևրումով իր ընթացքագոտի՝ TOYOTA ավտոմոբիլի մուտք գործելու պահից մինչև վերջինիս հետ ընդհարման տեղին հասնելը, տեխնիկական տեսանկյունից չի ունեցել ժամանակին կատարված արգելակմամբ իր ավտոմոբիլը կանգնեցնելու տեխնիկական հնարավորություն:

Դինամիկ գործընթացում միաժամանակ կարելի է մոդելավորել երթևեկության մեջ գտնվող մինչև 32 տրանսպորտային միջոցներ: Ծրագիրը հնարավորություն է տալիս մոդելավորել

երթնեկությունը դինամիկական ռեժիմում, այսինքն, հաշվի է առնվում տրանսպորտային միջոցների պարամետրերը և բնութագրերը, ճանապարհաձևի հետ անվադողի կառչման գործակիցը, շրջակա միջավայրը (օրինակ, ճանապարհամերձ լանջերի թեքությունները, կողային քամու ուժգնությունը և ուղղությունը), ինչպես նաև վարորդի կառավարման գործողությունները (դեկանիվի դարձում, արգելակման կամ արքելերատորի ոտնակի սեղում և այլն): Այդ դեպքում թափառքի և այլ դինամիկական ռեժիմների մոդելավորման ժամանակ հաշվի են առնվում ինչպես շարժիչի, այնպես էլ ավտոմոբիլի տրանսմիսիայի իրական բնութագրերը: Արգելակման գործընթացի մոդելավորման դեպքում կարող են հաշվի առնվել առանձին անիվների կցման և յուրաքանչյուր անիվի արգելակման անհատական բնութագրերը [3]:

Օրագիրն ունի ABS (Antilock Braking System) և ESP (Electronic Stability Program), ինչպես նաև ավտոմատ արգելակման BAS (Brakingassistsystem) և ադապտիվ կրուիզ-կոնտրոլ ACC (Adaptive Cruise Control) համակարգերով կահավորված տրանսպորտային միջոցների երթնեկության մոդելավորման հնարավորություն [7, 9, 10]:

### Եզրակացություն

PC-CRASH ծրագրային համալիրը հնարավորություն է տալիս կրճատել ավտոտեխնիկական փորձաքննությունների և այլ հետազոտությունների անցկացման ժամկետը, ինչպես նաև զգալիորեն բարձրացնել հետազոտության օբյեկտիվությունը և եզրակացությունների գիտական հիմնավորվածությունը:

ՃՏՊ-ների մոդելավորման համար համակարգչային ծրագրի կիրառման գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- իրադրության պատճառի և տեղի վերականգնման արդյունքներն անկախ են մարդկային գործոնի ներազդեցությունից,
- վթարի հանգամանքների մոդելավորման իրականացման արագության մեծացում, որը բարձրացնում է փորձագետի աշխատանքի արդյունավետությունը, ավտոմոբիլի երթնեկության մի շարք տեխնիկական և դինամիկական պարամետրերը հաշվառելու հնարավորությունը (օրինակ, ABS, ESP, ավտոմոբիլի կոշտությունը և այլն), որոնք էապես ազդում են հաշվարկների իրականացման ճշգրտության վրա,
- ստացված արդյունքների բարձր ճշգրտության ապահովում:

### Գրականության ցանկ

- [1] Ղատական ավտոտեխնիկական փորձաքննություն: Մաս 2-րդ, Մոսկվա, 1980, 230 էջ:
- [2] Տրանսպորտային հետքաբանական փորձաքննությունը ՃՏՊ-ների վերաբերյալ գործերով: Թողարկումներ 1-ին և 2-րդ, Մոսկվա, 1988, 170 էջ:
- [3] **В. Митунявичус**, Проблемные вопросы развития современных методологий экспертного анализа ДТП. Киев, 2006, 10 с.

- [4] **Т.С. Вайда**, Современные компьютерные программы для моделирования и реконструкции обстоятельств дорожно-транспортных происшествий. Киев, 2006, 12-20 с.
- [5] Применение компьютерного моделирования при проведении автотехнических экспертиз. Режим доступа: <<http://avtotrasolog.ru/content/view/25/5/>>. (Дата доступа: 03.03.2017).
- [6] Программный комплекс PC-CRASH. Программа для моделирования ДТП. Режим доступа: <[http://70region.tomsk.ru/?p=6\\_22](http://70region.tomsk.ru/?p=6_22)>. (Дата доступа: 03.03.2017).
- [7] PC-CRASH. A Simulation program for vehicle accidents. **Dr. Steffan Datentechnik**, 1996. 202 p.
- [8] **Vangi D.**, Vehicle collision dynamics analysis and reconstruction. Butterworth-Heinemann, Oxford, UK, 2020.
- [9] ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 28 հուն. 2007 թ. № 955-Ն որոշումը, 54 էջ:
- [10] Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը: Երևան, 2005, 31 էջ:
- [11] **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ն. Հովսեփյան**, Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները. Երևան, 2020, 331 էջ:

## ПРИМЕНЕНИЕ КОМПЬЮТЕРНЫХ ПРОГРАММ ДЛЯ АНАЛИЗА И МОДЕЛИРОВАНИЯ ДОРОЖНО-ТРАНСПОРТНЫХ ПРОИСШЕСТВИЙ

**Гарик Варужанович Хачатрян\***, **Армен Валерикович Арутюнян**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА*

*\*gkhachatryan@gmexpertise.am*

*В статье обсуждается применение современных методов - компьютерных программ, для анализа и моделирования дорожно-транспортных происшествий (ДТП), которые позволят обеспечить более высокую точность расчетов при восстановлении случаев ДТП. Представлены различные компьютерные программы (PC-CRASH, V-CRASH, V-SIM, CARAT), из которых PC-CRASH является одной из самых распространенных и работающих программ для анализа и моделирования ДТП. В статье рассматриваются общая характеристика этой программы, виды расчетных моделей и основные возможности ее применения. Внедрение компьютерной программы для анализа и моделирования ДТП в Республике Армения позволит изучить механизмы происшествий быстрее, обширнее и точнее.*

**Ключевые слова:** компьютерные программы, моделирование, эксперт, автотехник, происшествие, автомобиль, экспертиза

**APPLICATION OF COMPUTER SOFTWARE FOR ANALYSIS AND MODELING  
OF ROAD TRAFFIC ACCIDENTS**

**Garik Khachatryan\*, Armen Harutyunyan**

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA*

*\*gkhachatryan@gmexpertise.am*

*The article touches upon the application of modern methods, i.e. computer software, for analysis and modeling of road traffic accidents (RTA), which will allow to ensure higher accuracy of calculations during the recovery after the road traffic accidents. Various computer software packages (PC-CRASH, V-CRASH, V-SIM, CARAT) are presented, out of which PC-CRASH is one of the most popular and functional software for the analysis and modeling of RTAs. The article discusses the general characteristics of that software, the types of calculation models, and the main opportunities of its application. The introduction of a computer software for the analysis and modeling of RTAs in the Republic of Armenia will enable a faster, more comprehensive and accurate study of accident mechanisms.*

**Keywords:** *Computer software, modeling, expert, motor mechanic, accident, automobile, expertise*

**Խաչատրյան Գարիկ Վարուժանի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոն, դասախոս, (+374)98556676, gkhachatryan@gmexpertise.am,

**Հարությունյան Արմեն Վալերիկի, ս.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոն, դասախոս, (+374)43116611, armharutyunyan7@mail.ru

**Хачатрян Гарик Варужанович** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, преподаватель, (+374)98556676, gkhachatryan@gmexpertise.am, **Арутюнян Армен Валерикович, к.т.н.** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, преподаватель, (+374)43116611, armharutyunyan7@mail.ru

**Khachatryan Garik** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, lecturer, (+374)98556676, gkhachatryan@gmexpertise.am, **Harutyunyan Armen doctor of philosoph (Ph.D) in Engineering** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, lecturer, (+374)43116611, armharutyunyan7@mail.ru

**Khachatryan Garik** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, lecturer, (+374)98556676, gkhachatryan@gmexpertise.am, **Harutyunyan Armen doctor of philosoph (Ph.D) in Engineering** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, lecturer, (+374)43116611, armharutyunyan7@mail.ru

Ներկայացվել է՝ 25.12.2022թ.

Գրախոսվել է՝ 01.02.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

## ՀԻՄՆԱՏԱԿԻ ԴԵՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԽՎԱԾ ՇԵՆՔԻ ԿՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՒՆԵԼԱՎՈՐՈՒՄԻՑ

Լուսինե Գուրգենի Կարապետյան\*, Արսեն Կարենի Շահրամանյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

\*karapetyan.lusin@gmail.com

Հոդվածում ուսումնասիրվել է տարբեր եղանակներով շենքի կրող համակարգի մոդելավորման դեպքում միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքով բազմահարկ շենքի հիմնատակի լարվածադեֆորմատիվ վիճակը: Աշխատանքում շենքը մոդելավորվել է LIRA SAPR հաշվարկային ծրագրով, իսկ գրունտը՝ PLAXIS 3D հաշվարկային ծրագրով: PSI հավելվածի միջոցով իրականացվել է համատեղ հաշվարկ: Դիտարկվել են երեք տարբեր մոդելներ: Առաջին մոդելում գրունտի ստվարաշերտի վրա տեղադրվել է շենքի քաշով բեռնավորված հիմքի սալ, երկրորդ մոդելում գրունտի ստվարաշերտի վրա տեղադրվել է մինչև առաջին հարկով կրող համակարգ, որի վրա ազդում է շենքի մնացած հատվածի բեռը, երրորդում՝ գրունտի ստվարաշերտի վրա մոդելավորված է ամբողջական կառույցը: Հիմնատակի լարվածադեֆորմացիոն վիճակը պարզելու համար իրականացվել են ստատիկ հաշվարկներ, որոնց արդյունքներով կատարվել է հիմնատակի դեֆորմացիաների և ընկրկելիության գործակիցների համեմատական վերլուծություն: Իրականացվել են առաջարկներ իրական նախագծերում գրունտի նստվածքների հաշվարկի մեթոդի ընտրության վերաբերյալ: Տվյալ աշխատանքի նպատակն է ուղղորդել նախագծողներին հիմնատակի դեֆորմացիաների հաշվարկներ կատարելու ժամանակ:

**Բանալի բառեր.** բազմահարկ շենք, հիմնատակի նստվածք, գրունտի ստվարաշերտ, ստատիկ հաշվարկ


### Ներածություն

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում, շենքերի և կառույցների մոդելավորման և հաշվարկման ժամանակ նախագծողները մեծ ուշադրություն են դարձնում սեյսմակայունության հարցերին [1, 2]: Վերջինս շատ կարևոր է, միաժամանակ պետք է նշել, որ ոչ պակաս կարևորություն ունեն նաև հիմնատակի նստվածքների ճշգրիտ որոշման հարցերը, քանի որ դրանցից են կախված շենքերի և կառույցների բնականոն շահագործման ապահովման պայմանները:

Տարեցտարի ՀՀ-ում ավելանում են կապիտալ շինարարության ծավալները և փորձը ցույց է տալիս, որ հիմնատակի լարվածադեֆորմացիոն վիճակի ոչ պատշաճ գնահատման պատճառով հաճախակի են դարձել շենքերի վթարային վիճակում հայտվելու դեպքերը: Ուստի, դժվար լուծելի դեպքերից խուսափելու համար շատ կարևոր է նախագծային փուլում մանրամասն ուսումնա-

սիրել գրունտների ստվարաշերտի լարվածադեֆորմացիոն վիճակը և հնարավորինս ճշգրիտ որոշել կառույցի բեռից առաջացող նստվածքների մեծությունները:

Հիմնատակի դեֆորմացիաները պարզելու համար հաշվարկները հիմնականում իրականացվում են միայն կառույցի ֆիզիկական մոդելի ձևով և ընկրկելիության գործակցի հաստատուն արժեքով նկարագրված տարբերակով, ինչը միշտ չէ որ տալիս է հավաստի արդյունքներ: Առաջարկվում է հիմնատակի լարվածադեֆորմացիոն վիճակը, ինչպես նաև կառույցի քաշից առաջացող նստվածքը որոշել մի քանի տարբեր եղանակներով և նախագծեր իրականացնելիս առաջնորդվել դրանցից ստացված առավելագույն արժեքներով: Աշխատանքում հետազոտվել են 11 հարկանի շրջանակակապային կրող համակարգով բնակելի շենքի համար մոդելավորված երեք տարբեր հաշվարկային սխեմաներ (նկ. 1):





**Նկ. 1. Բազմահարկ շենքի երեք տարբեր սխեմաներ. ա – հիմնային սալի տարբերակով, բ – մինչև առաջին հարկի տարբերակով, գ – ամբողջական շենքի տարբերակով**

Առաջին սխեմայում (ա) մոդելավորվել է միայն հիմքի սալը, իսկ դրանից վերև գտնվող համակարգը նկարագրվել է որպես հիմքի սալի վրա հավասարաչափ բաշխված բեռնվածք, երկրորդ սխեմայում (բ) մոդելավորվել են մինչև առաջին հարկի կոնստրուկցիաները, իսկ շենքի ավելի վերև գտնվող մասը նկարագրվել է որպես ծածկի սալի վրա հավասարաչափ բաշխված բեռնվածք, երրորդ սխեմայում (գ) գրունտի ստվարաշերտի վրա շենքը մոդելավորվել է ամբողջությամբ՝ ինչպես հիմնականում իրականացվում է: Բացի վերը նշված երեք մոդելներից, հաշվարկներ են իրականացվել նաև հաստատուն ընկրկելիության գործակցի կիրառման տարբերակով:

**Նյութեր և մեթոդներ**

Դիտարկվող բազմահարկ շենքի կրող համակարգը հաշվարկային ծրագրերում մոդելավորվել է հիմնատակի վրա 3 տարբեր եղանակներով [3-6]: Հոդվածում ներկայացված է նշված երեք տարբեր եղանակներով իրականացված հաշվարկների արդյունքների համեմատական վերլուծությունը: Շենքը մոդելավորվել է վերջավոր տարրերի հիմքով աշխատող LIRA SAPR հաշվարկային ծրագրով, իսկ գրունտը՝ PLAXIS 3D գեոտեխնիկական հաշվարկային ծրագրով, որը նույնպես աշխատում է վերջավոր տարրերի հիման վրա: Այնուհետև, PSI հավելվածի միջոցով իրականացվել է համատեղ հաշվարկ: Հաշվարկների համար ընտրված է ստորև ներկայացված ծավալահատակագծային լուծումներով շենք (նկ. 2): Շենքը հատակագծում ունի հետևյալ առանցքային չափերը՝ 60 x 30 մ, այն 11 հարկանի է՝ հարկի բարձրությունը 3,3 մ է:



**Նկ. 2. Դիտարկվող շենքի ճակատը և եռաչափ տեսքը**

Կառույցի կրող կոնստրուկցիաների համար ընտրվել են հետևյալ բնութագրերը.

- հիմնային սալ – 60 սմ, ( $E_b = 3,06 \cdot 10^5$  ՄՊա),
- սյուն – 50x50 սմ, ( $E_b = 3,06 \cdot 10^5$  ՄՊա),
- պարզունակ – 50x60 սմ, ( $E_b = 3,06 \cdot 10^5$  ՄՊա),
- ծածկի սալ – 16 սմ, ( $E_b = 3,06 \cdot 10^5$  ՄՊա):

Հաշվարկներում բետոնի դասն ընդունվել է B25, ամրանինը՝ A500C և A240: Աղյուսակ 1-ում ներկայացված են ուսումնաստիրվող կառույցի վրա ընդունված հաշվակային բեռնվածքների արժեքները:

*Աղյուսակ 1*

**Հաշվարկային և նորմատիվ բեռնվածքների մեծությունները**

Բեռնվածքի անվանումը	Նորմատիվ բեռնվածք, կՆ/մ <sup>2</sup>	Բեռն. հուս. գործակից, γբ	Հաշվակային բեռնվածք, կՆ/մ <sup>2</sup>
<i>Մշտական</i>			
ե/բ սալ 0,16 մ	3,75	1,1	4,13
հատակի շերտեր և միջնորմեր	2,58	1,2	3,10
<i>Ժամանակավոր</i>			
կարճատև	0,45	1,2	0,54
երկարատև	1,05	1,2	1,26

Plaxis 3D հաշվարկային ծրագրում գրունտը մոդելավորվել է Mohr-Coulomb մեթոդով, որտեղ օգտագործվել են գրունտի հինգ հիմնական պարամետրերը՝ դեֆորմացիայի մոդուլը, ներքին շփման գործակիցը, գրունտի տեսակարար կշիռը, Պուասոնի գործակիցը և տեսակարար շաղկապվածությունը: Մեթոդում գրունտի դեֆորմացիաների բնույթը գծային է, ասինքն, դեֆորմացիաներն ուղիղ համեմատական են  $\sigma$  լարման մեծությանը և փոփոխվում են, կախված գրունտների դեֆորմացիային մոդուլի մեծությունից [7-11]:

Հաշվարկներում շենքի հիմնատակը մոդելավորվել է ըստ իրական ինժեներատեխնիկական հետազոտությունների արդյունքներով ստացված ստվարաշերտի վրա, որտեղ տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներատեխնիկական էլեմենտներով.

Շերտ-1: Լիցքային գրունտ, նախկինում գոյություն ունեցող շինարարական մնացորդներ, արհեստական լցված խճային, մանրախճային գրունտներ կավավազի հետ, հանդիպում են նաև բազալտի մեծաքարեր:

Շերտ-2: Խիճ, մանրախիճ, մեծաքարեր, կավային, ավազային լցնով, սակավ խոնավ:

Շերտ-3: Բազալտներ՝ մոխրագույն, թույլ ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչավոր, ծակոտկեն, բեկորային անջատումներով, կարծր:


Շերտ-4: Հրաբխային խարամ, ավազային, ավազախճային կավմի, հանդիպում է նաև փոշային կավով, շլակավորված բազալտի խճի և մանրախճի հետ:


Որպես հիմնատակ ծառայում է երրորդ շերտը: Աղյուսակ 2-ում և նկ. 3-ում ներկայացված են գրունտի շերտերը դրանց ֆիզիկամեխանիկական հատկություններով:

Աղյուսակ 2

Գրունտի ֆիզիկամեխանիկական բնութագրերը

Ֆիզիկամեխանիկական բնութագրերը		Գրունտի շերտերը			
		1	2	3	4
1. Գրունտի խտությունը, $տ/մ^3$		1,80	2,15	2,61	1,66
2. Ծակոտկենության գործակիցը, $e$		-	-	0,690	0,739
3. Ներքին շփման անկյունը, $աստիճան$	$\varphi_{II}$	-	-	-	30
	$\varphi_I$	-	-	-	28
4. Տեսակարար շողկապվածությունը, $կՊա$	$C_{II}$	-	-	-	2
	$C_I$	-	-	-	1
5. Դեֆորմացիայի մոդուլը, $E$ , $ՄՊա$		-	35	5000	30
6. Ամրության սահմանն ըստ միառանցք սեղմման, $R_s$ , $ՄՊա$		-	-	87,2	-
7. Պայմանական հաշվարկային ճնշում, $R$ , $ՄՊա$		-	0,35	-	0,30
8. Ընկրկելիության գործակից, $տ/մ^3$		-	2500	45000	2000
9. Կարգն ըստ սեյսմիկ հատկության		III	II	I	II






**Նկ. 3. Բնժեներաերկրաբանական կտրվածք I-I' և II-II'**

**Արդյունքներ և քննարկում**


Ստորև ներկայացված են LIRA SAPR և PLAXIS 3D համակարգչային ծրագրերով մշակված մոդելների եռաչափ տեսքերը և ստացված արդյունքները (նկ. 4).



**Նկ. 4. Շենքի մոդելավորման առաջին եղանակի արդյունքները. ա – մոդելի տեսքն ըստ PLAXIS 3D ծրագրի, բ – շենքի հիմնատակի նստվածքն ըստ PLAXIS 3D ծրագրի, գ – հիմքի սալի ընկրկելիության գործակցի արժեքներն ըստ LIRA SAPR ծրագրի**

Հիմնատակի առավելագույն նստվածքը ստացվել է  $-8,20$  մ/մ, իսկ ընկրկելիության գործակիցը՝  $1700...2000$  տ/մ<sup>3</sup>: Հաշվարկային արդյունքներից կարելի է եզրակացնել, որ առաջին եղանակով 4 շենքի մոդելավորման դեպքում նստվածքն ունի հավասարաչափ զարգացող բնույթ:


Շենքի մոդելավորման երկրորդ եղանակից ստացված արդյունքները (նկ. 5).



**Նկ. 5. Շենքի մոդելավորման երկրորդ եղանակի արդյունքները. ա – մոդելի տեսքն ըստ PLAXIS 3D ծրագրի, բ – շենքի հիմնատակի նստվածքն ըստ PLAXIS 3D ծրագրի, գ – հիմքի սալի ընկրկելիության գործակցի արժեքներն ըստ LIRA SAPR ծրագրի**

Հիմնատակի առավելագույն նստվածքը ստացվել է  $-5,85$  մմ, իսկ ընկրկելիության գործակիցը ստացվել է  $4500\dots18500$  մ/մ<sup>3</sup>: Հաշվարկի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ երկրորդ եղանակով շենքի մոդելավորման դեպքում նստվածքն ունի տեղային բնույթ, քանի որ բեռնվածքը հիմնատակին է փոխանցվում առաջին հարկի սյուների միջոցով (նկ. 5):

*Շենքի մոդելավորման երրորդ եղանակից ստացված արդյունքները (նկ. 6)*




**Նկ. 6. Շենքի մոդելավորման երրորդ եղանակի արդյունքները. ա – մոդելի տեսքն ըստ PLAXIS 3D ծրագրի, բ – շենքի հիմնատակի նստվածքն ըստ PLAXIS 3D ծրագրի, գ – հիմքի սայի ընկրկելիության գործակցի արժեքներն ըստ LIRA SAPR ծրագրի**

Հիմնատակի առավելագույն նստվածքը ստացվել է  $-10,80$  մմ, իսկ ընկրկելիության գործակիցը՝  $3000\dots12000$  մ/մ<sup>3</sup>: Երրորդ եղանակով շենքի մոդելավորումն նստվածքը ստացվել է առավելագույնը: Հաշվարկային արդյունքներից կարելի է եզրակացնել, որ երրորդ եղանակով մոդելավորված շենքի հիմնատակի հաշվարկի արդյունքները իրականին ավելի մոտ են ստացվել, քան մյուս երկու եղանակների դեպքում:

Բացի վերը իրականացված հաշվարկներից, կատարվել է նախագծերում կիրառվող եղանակով իրականացվող հաշվարկային վերլուծություն: Այն է՝ LIRA SAPR ծրագրով ըստ երկրաբանի եզրակացության տրված ընկրկելիության գործակցով մոդելավորված շենքի կրող համակարգի հաշվարկ: Այս հաշվարկի մոդելը նման է 3-րդ սխեմայով մոդելին:

Ստորև ներկայացված են հաշվարկի արդյունքները (նկ. 7):



**Նկ. 7. Նախագծերում կիրառվող եղանակով մոդելավորված շենքի հիմնատակի նստվածքն ըստ LIRA SAPR ծրագրի**

Հիմնատակի առավելագույն նստվածքը ստացվել է  $-1,21$  մմ, որն ամենացածր արժեքն է համեմատած վերոնշյալ եղանակների հետ:

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, տարբեր եղանակներով շենքի մոդելավորման դեպքում արդյունքները ստացվում են տարբեր, ուստի ոչ բոլոր դեպքերում է հուսալի հիմնվել միայն մեկ հաշվարկով ստացված արդյունքների վրա: Ստորև ներկայացված են հաշվարկային արդյունքներով ստացված որոշ տվյալներ (աղ. 3):

Աղյուսակ 3

**Համակարգչային մոդելների նկարագրություն**

Հ/հ	Մոդելի նկարագրությունը	Հիմնատակի նստվածքի առավելագույն արժեքը, մմ	Ընկրկելիության գործակցի արժեքը, m/m <sup>3</sup>
1.	Հիմնային սալով մոդել գրունտի ստվարաշերտի վրա	-8,20	1700 ...2000
2.	Առաջին հարկով մոդել գրունտի ստվարաշերտի վրա	-5,85	4500 ...18100
3.	Ամբողջական կառույց գրունտի ստվարաշերտի վրա	-10,80	3000 ...12000
4.	Հաստատուն ընկրկելիության գործակցով մոդել	-1,26	Ըստ երկրաբանի եզրակացության՝ 45000

Հաշվարկի արդյունքներով արձանագրվում է, որ բոլոր եղանակներով ստացված արդյունքները խիստ տարբեր են: Ինչպես երևում է աղ. 3-ից, հիմնատակի ամենամեծ նստվածքն երրորդ եղանակի դեպքում է՝ 10,8 մմ, սակայն այս դեպքում ըստ հաշվարկների խճանկարի առավելագույն արժեքներն ունեն տեղային բնույթ՝ հաշվի առնելով այն փաստը, որ հենց կենտրոնական սյուների վրա է ընկնում հիմնական բեռը: Իսկ, օրինակ, առաջին եղանակով շենքի մոդելավորման դեպքում նստվածքն ունի հավասարաչափ զարգացող բնույթ, քանի որ բեռն ազդում է հավասարաչափ: Երկրորդ եղանակով շենքի մոդելավորման դեպքում արդյունքները ստացվել են առաջին և երրորդ եղանակների միջակայքում:

**Եզրակացություն**

Ըստ ստացված տվյալների, համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ երրորդ եղանակով շենքի մոդելավորման դեպքում ստացվում է առավելագույն հիմնատակի նստվածքը, որն իրականին ավելի մոտ է, քան մյուս երկու եղանակների դեպքում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հիմնատակի լարվածադեֆորմացիոն վիճակը գնահատելու համար ավելի նպատակահարմար է հաշվարկային ծրագրում շենքը մոդելավորել երրորդ եղանակով:

Պատկերն ավելի ակնառու է թույլ գրունտների կամ խառը գրունտներով ստվարաշերտերի դեպքում: Ցածրահարկ շենքերի դեպքում ներկայումս կիրառվող տարբերակը համարվում է ընդունելի, սակայն բարձրահարկ շենքերի դեպքերում, ինչպես ցույց տվեցին իրականացված հաշվարկների արդյունքները, այլ են: Հաշվի առնելով, որ հիմնատակի նստվածքների հաշվարկները շատ պատասխանատու են, քանի որ շենքի հետագա աշխատանքի վրա ունեն ուղիղ ազդեցություն, դրանց վրա պետք է առավել մեծ ուշադրություն դարձնել նախագծեր իրականացնելիս:

**Գրականության ցանկ**

- [1] ՀՀՇՆ 20-04-2020. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր, Երևան, 2020, 93 էջ:
- [2] Տ.Լ. Դադայան, Լ.Գ. Կարապետյան, Կառուցվածքների սեյսմակայունություն, Երևան, 2021, 148 էջ:
- [3] А.В. Перельмутер, В.И. Сливкер, Расчетные модели сооружений и возможность анализа, Москва, 2011, 736 с.
- [4] Б.И. Далматов, Механика грунтов, основания и фундаменты, Ленинград, 1988, 384 с.
- [5] М.Б. Берлинов, Б.А. Ягубов, Примеры расчета оснований и фундаментов, Москва, 1986, 430 с.
- [6] ГОСТ 25100-82. Грунты. Классификация, Москва, 1982, 197 с.
- [7] ՀՀՇՆ IV-10.01.01 . Շենքերի և կառուցվածքների հիմնատակեր, Երևան, 2006, 52 ս.
- [8] А.Б. Фадеев, Метод конечных элементов в геомеханике, Москва, 1987, 221 с.
- [9] А.К. Черников, Теоретические основы геомеханики, Санкт-Петербург, 1994, 187 с.
- [10] В.Н. Парамонов, Метод конечных элементов при решении нелинейных задач геотехники, Санкт-Петербург, 2012, 261 с.
- [11] T.L. Dadayan, L.G. Karapetyan, Assessment of the Stress-Strain State of Strengthened Buildings in Seismic Regions Taking Into Account Soil Dynamic Parameters. Journal of Architectural and Engineering Research 3 (2022) 32-40, DOI: 10.54338/27382656-2022.3-003

**ИЗМЕНЕНИЕ ДЕФОРМАЦИИ ОСНОВАНИЯ В ЗАВИСИМОСТИ ОТ  
МОДЕЛИРОВАНИЯ НЕСУЩЕЙ СИСТЕМЫ ЗДАНИЯ**

**Լուսինե Գургеноվնա Կարապետյան \*, Արսեն Կարենովիչ Շախրամյան**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА*

*\*karapetyan.lusin@gmail.com*

**Նկ. 1. Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնի 2008-2010 թթ. գեոդեզիական փուլային դիտարկումների վերլուծությունը**


Հորիզոնական տեղաշարժն ըստ  $Y$  կոորդինատի պոլիգոնի հյուսիսարևելյան հատվածում Ակունք հիմնակետից նկատվում է դեպի արևելյան ուղղությամբ տեղաշարժ մինչև 2 մմ/տարի, հյուսիսարևմտյան հատվածներում տեղաշարժը դեպի արևմտյան ուղղությամբ է՝ շուրջ 2 մմ/տարի (12 հիմնակետ), կենտրոնական հատվածներում տեղաշարժը ամբողջությամբ արևմտյան ուղղությամբ է՝ շուրջ 1,5 մմ/տարի: Պոլիգոնի ողջ հարավային հատվածում տեղաշարժեր գրեթե չեն նկատվել:

Ամփոփելով վերը նշվածը, պետք է նշել, որ Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնում 2008-2010 թթ. նկատվել է հյուսիսային հատվածների հորիզոնական տեղաշարժ դեպի հյուսիսարևելք, կենտրոնական հատվածներում՝ հարավ-արևմուտք, իսկ հարավային հատվածներում հիմնական տեղաշարժի վեկտորը հյուսիսային ուղղությամբ է [9, 10]:

Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնի տարածաժամանակային վերլուծությունն ուղղաձիգ բաղադրիչում (նկ. 1) ցույց է տալիս, որ 2008-2010 թթ. ընթացքում պոլիգոնի հյուսիսային հատվածում նկատվում են հիմնական բարձրացումներ մինչև 10 մմ/տարի, տեղ-տեղ իջեցումներ մինչև 15...20 մմ/տարի, ամբողջ կենտրոնական հատվածում նկատվում է մինչև 30 մմ/տարի իջեցում, իսկ հարավարևմտյան և հարավարևելյան հատվածներում հակառակ գործընթացն է՝ բարձրացում մինչև 15...20 մմ/տարի, ուստի կարելի է եզրակացնել, որ ամբողջ պոլիգոնի հյուսիսային և հարավային հատվածներում տեղի են ունենում հորստային գործընթացներ (բարձր դիրք է գրավում հարևան տեղամասերի նկատմամբ), իսկ կենտրոնական մասում՝ գրաբենային (ցածր դիրք է գրավում հարևան տեղամասերի նկատմամբ):


Վերլուծելով նկ. 2-ում ներկայացված Սպիտակի գեոդինամիկական պոլիգոնի հորիզոնական տեղաշարժերն ըստ  $X$  կոորդինատների, ակնհայտ է, որ հյուսիսարևմտյան հատվածում, Լեռնագյուղ հիմնակետի մոտակայքում, տեղաշարժը հյուսիսային ուղղությամբ է՝ մինչև 35 մմ/տարի, կենտրոնական հատվածում՝ Արջուտ հիմնակետի մոտակայքում նկատվում են ինչպես հարավային, այնպես էլ հյուսիսային տեղաշարժեր՝ մինչև 10 մմ/տարի, մնացած հատվածներում  $X$  բաղադրիչով գրեթե տեղաշարժեր չեն նկատվում: Պոլիգոնում հորիզոնական տեղաշարժերը հյուսիսարևմտյան հատվածում  $y$  ուղղությամբ Լեռնագյուղ հիմնակետի մոտակայքում ամբողջությամբ դեպի արևմուտք է՝ մինչև 50 մմ/տարի, կենտրոնական հատվածում Արջուտ հիմնակետի մոտակայքում նույնպես տեղ-տեղ նկատվում է արևելյան և արևմտյան տեղաշարժեր՝ մինչև 5 մմ/տարի:

Այսպիսով ակնհայտ է, որ Սպիտակի գեոդինամիկական պոլիգոնի հյուսիսարևմտյան հատվածն ամբողջությամբ տեղաշարժվում է նույն ուղղությամբ՝ մինչև 50 մմ/տարի: Պոլիգոնի կենտրոնական, հարավային և արևմտյան հատվածներում հորիզոնական տեղաշարժերը փոքր են կամ բացակայում են (նկ. 2):



**Նկ. 2. Մայիտակի գեոդինամիկական պոլիգոնի 2014-2016 թթ. Գեոդեզիական փուլային դիտարկումների վերլուծությունը հորիզոնական տեղաշարժերի վերաբերյալ**

Մայիտակի գեոդինամիկական պոլիգոնի ուղղաձիգ տեղաշարժի բաշխվածության քարտեզը ցույց է տալիս (նկ. 3), որ պոլիգոնի հյուսիսային և հյուսիսարևմտյան տեղամասերում 1709 հենանիշի մոտակայքում արձանագրվել են մինչև 15 մմ/տարի իջեցումներ, ի տարբերություն վերը նշված տեղամասերի՝ 1045 հենանիշից դեպի հարավարևմտյան և արևելյան հատվածներում առկա են համեմատաբար փոքր ինտենսիվությամբ բարձրացումներ, ինչպես ցույց են տալիս Մայիտակի գեոդինամիկական պոլիգոնի 3 բաղադրիչներով տեղաշարժերը՝ առավել ակտիվ տեղամաս է համարվում հյուսիսարևմտյան հատվածը:



**Նկ. 3. Մայիտակի գեոդինամիկական պոլիգոնի 2014-2016 թթ. ուղղաձիգ տեղաշարժերը**

Այսպիսով, համեմատելով երկու գեոդինամիկական պոլիգոնների հորիզոնական բաղադրիչներով տարածաժամանակային տեղաշարժերի վերլուծությունները, կարելի է փաստել, որ

երկու պոլիգոններում էլ նկատվում են տեղաշարժեր հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղությամբ: Նշված երկու տեղամասերում ուղղաձիգ բաղադրիչներով նկատվում են և իջեցումներ, և բարձրացումներ 30...50 մմ/տարի սահմաններում [11]:

ԱՏՀ/GIS մոդելավորման և քարտեզագրման արդյունքում ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն գեոդեզիական ավանդական վերլուծությունների, որտեղ տեղեկատվությունը կետային է, այս դեպքում ստացվում է գեոդինամիկական պոլիգոններում տեղի ունեցած տեղաշարժերի տարածական պատկերը:

### Եզրակացություն

Այսպիսով, Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնում 2008-2010 թթ. նկատվել է հյուսիսային հատվածների հորիզոնական տեղաշարժ դեպի հյուսիս-արևելք, կենտրոնական հատվածներում՝ հարավ-արևմուտք, իսկ հարավային հատվածներում հիմնական տեղաշարժի վեկտորը հյուսիսային ուղղությամբ է: Ամբողջ պոլիգոնի հյուսիսային և հարավային հատվածներում տեղի են ունենում հորստային գործընթացներ (բարձր դիրք է գրավում հարևան տեղամասերի նկատմամբ), իսկ կենտրոնական մասում՝ գրաբենային (ցածր դիրք է գրավում հարևան տեղամասերի նկատմամբ):

Ինչպես ցույց են տալիս Սպիտակի գեոդինամիկական պոլիգոնի 3 բաղադրիչներով տեղաշարժերը՝ առավել ակտիվ տեղամաս է համարվում հյուսիսարևմտյան հատվածը՝ մինչև 50 մմ/տարի: Այսպիսով, Համեմատելով երկու պոլիգոններում էլ նկատվում են տեղաշարժեր հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղությամբ, իսկ ուղղաձիգ բաղադրիչներով նկատվում են և իջեցումներ, և բարձրացումներ 30...50 մմ/տարի սահմաններում:

Կարելի է փաստել, ԱՏՀ/GIS կիրառմամբ առաջարկվող վերլուծական աշխատանքների մեթոդաբանությունը կարող է հանդիսանալ արդյունավետ գործիք՝ տարբեր գեոդինամիկական պոլիգոնների տարածաժամանակային համեմատությունների, գունաբաժանման տարբերությունների, կապերի և գործընթացների խորքային ուսումնասիրությունների ժամանակ: Մեկ միասնական մմ/տարի (ԱՏՀ) միջավայրում կարելի է ունենալ կետերի տեղադիրքը, վերջիններիս փոփոխությունները հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններով, ինչպես նաև ստեղծել տվյալների բազաներ, կատարել վերլուծությունները, ստանալ ուսումնասիրվող տեղանքի ոչ միայն կետային, այլ նաև տարածաժամանակային տեղաշարժերը:

### Գրականության ցանկ

- [1] **Լ.Վ. Մանուկյան**, Նոր թվային տեխնոլոգիաների կիրառումը երկրակեղևի ժամանակակից ուղղահայաց շարժերը հետազոտելու նպատակով, ԵՃՇՊՀ գիտ. աշխ. III (25) (Երևան, 2005) 151-154:
- [2] **Ա.Ա. Մարգարյան**, Ժամանակակից արբանյակային տեխնոլոգիաների կիրառմամբ գեոդինամիկական պոլիգոնում դեֆորմացիոն գործընթացների հետազոտությունները, ՃՇՀԱՀ գիտ. աշխ. I (76) (Երևան, 2020) 70-79:
- [3] **А.К. Певнев**, О невостробованных возможностях геодезического метода в проблеме прогноза землетрясений, Геодезия и картография 7 (2000) 24-37.
- [4] **A.P. Averin, V.N. Zakharov, U.A. Filippov**, Development of geographic information systems for monitoring technological geo- and dynamic processes during the development of subsurface resources, Open Education 5 (2010) 4-11.

- [5] **Zh. Zhantayev, A. Bibossinov, A.Fremd et al.**, Automated lineament analysis to assess the geodynamic activity areas, *Procedia Computer Science* 121 (2017) 699–706.
- [6] **Asli Dogru, Haluk Ozener, Taner Selcuk, et al.**, *Multidisciplinary GIS for Geodynamic Research*, Rome, Italy, May, 2012, pp. 6-10.
- [7] Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոն օբյեկտում կատարված աշխատանքների 2008-2010 թթ. կատարված գեոդեզիական աշխատանքների տեխնիկական հաշվետվություն. «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ, Երևան, 2012, 71 էջ:
- [8] Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման 2013-16 թթ. կատարված գեոդեզիական աշխատանքների տեխնիկական հաշվետվություն. «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ, Երևան, 2016, 71 էջ:
- [9] **Լ.Վ. Մանուկյան, Վ.Ա. Մարգարյան**, Մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնում երկրակեղևի դինամիկայի ուսումնասիրման գեոդեզիական մոնիթորինգը, ԵՃՇՊՀ տեղեկագիր 3 (Երևան, 2009) 68-74:
- [10] **L.V. Manukyan, A.A. Margaryan, S.V. Tovmasyan, et al.**, Crustal displacement based on three stages geodetic studies results in Spitak geodynamic polygon, *Eurasian Union of Scientists* 6(75) (2020) 37-41, DOI: 10.31618/esu. 2411-6467.8.53.1
- [11] **Л.В. Манукян**, Геодезический мониторинг движений земной коры на Спитакском геодинамическом полигоне, *Вестник Полоцкого государственного университета. Серия F. Строительство. Прикладные науки : научно-теоретический журнал* 8 (2014) 106-109.

## ПРОСТРАНСТВЕННО-ВРЕМЕННОЕ МОДЕЛИРОВАНИЕ ГЕОДИНАМИЧЕСКИХ ПОЛИГОНОВ С ПОМОЩЬЮ ГЕОИНФОРМАЦИОННЫХ СИСТЕМ

**Ануш Ашотовна Маргарян<sup>1\*</sup>, Лариса Владимировна Манукян<sup>2</sup>, Сурен Владимирович Товмасян<sup>2</sup>, Ваагн Сосович Мурадян<sup>2</sup>**

<sup>1</sup>Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

<sup>2</sup>Комитет кадастра, г. Ереван, РА

\*anush.margaryan.89@mail.ru

*В статье представлены результаты пространственно-временного моделирования с использованием географических информационных систем (ГИС) по результатам данных геодезического мониторинга на геодинамических полигонах в сейсмических зонах РА. Использован совместный анализ данных, собранных в разные периоды и разными методами, обоснованы эффективность измерений и преимущества достоверности конечных результатов анализа данных, полученных в результате измерений с использованием спутниковых технологий, перед традиционными методами измерений и обработки данных. Изучение сейсмических зон с использованием технологий ГНСС получило широкое применение во многих странах. Анализ информации о смещениях, определяемых с применением данных станций ГНСС, позволяет составить подробную карту современных движений земной коры по горизонтальным и вертикальным параметрам. Высокотехнологичные работы позволяют повысить точность наблюдений, измерений и сэкономить значительное количество средств и времени. Анализ данных, полученных при моделировании и картографировании ГИС, показывает, что в отличие от традиционного геодезического анализа, где информация точечная, в данном случае мы имеем пространственное изображение сдвигов на геодинамических полигонах.*

**Ключевые слова:** ГНСС технологии, сейсмоактивные зоны, геодезический мониторинг, геодинамический полигон, географические информационные системы (ГИС)

## SPATIAL-TEMPORAL MODELING OF GEODYNAMIC POLYGONS THROUGH GEOGRAPHIC INFORMATION SYSTEM

**Anush Margaryan<sup>1\*</sup>, Larisa Manukyan<sup>2</sup>, Suren Tovmasyan<sup>2</sup>, Vahagn Muradyan<sup>2</sup>**

<sup>1</sup>National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

<sup>2</sup>Cadastr Committee, Yerevan, RA

\*anush.margaryan.89@mail.ru

The article presents the results of the modeling of spatial-temporal surveys based on the results of geodetic monitoring in geodynamic polygons in the Republic of Armenia seismically active zones using Geographic Information Systems (GIS). A joint analysis of data collected in different periods and by different methods is used, the efficiency of measurements and the advantages of the reliability of the final results of data analysis obtained as a result of measurements using satellite technologies over traditional methods of measurement and data processing are substantiated. The study of seismic zones using GNSS technologies has been widely used in many countries. Analysis of information about displacements determined by GNSS stations makes it possible to compile a detailed map of modern movements of the earth's crust in terms of horizontal and vertical parameters. High technology work provides you a possibility to increase the accuracy of your observations, measurements and saves a considerable amount of time and money. The analysis of the data obtained as a result of GIS modeling and mapping shows that in difference to traditional geodetic analyzes, where the information is in point, in this case we have a spatial image of the displacements in the geodynamic polygons.

**Keywords:** GNSS technology, seismically active zones, geodetic monitoring, geodynamic polygon, geographic information systems (GIS)

**Մարգարյան Անուշ Աշոտի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինժեներական գեոդեզիայի ամբիոն, ասիստենտ, (+374)95200349, anush.margaryan.89@mail.ru, **Մանուկյան Լարիսա Վլադիմիրի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - Կադաստրի կոմիտե, (+374)91471971, laradacent@gmail.com, **Թովմասյան Սուրեն Վլադիմիրի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - Կադաստրի կոմիտե, (+374)77100349, suren.tovmasyan@gmail.com, **Մուրադյան Վահագն Սուսի, աշխ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - Կադաստրի կոմիտե, (+374)94319346, muradyanvahagn85@gmail.com

**Маргарян Ануш Ашотовна, к.т.н.** (РА, г. Ереван) - НУАСА, Кафедра Инженерной геодезии, ассистент, (+374)95200349, anush.margaryan.89@mail.ru, **Манукян Лариса Владимировна, к.т.н., доцент** (РА, г. Ереван) – Комитет кадастра, (+374)91471971, laradacent@gmail.com, **Товмасын Сурен Владимирович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - Комитет кадастра, (+374)77100349, suren.tovmasyan@gmail.com, **Мурадян Ваагн Сосович, к.г.н., доцент** (РА, г. Ереван) - Комитет кадастра, (+374)94319346, muradyanvahagn85@gmail.com

**Margaryan Anush, doctor of philosophy (Ph.D) in engineering** (RA, Yerevan) - NUACA, Chair of Engineering Geodesy, assistant (+374)95200349, anush.margaryan.89@mail.ru, **Manukyan Larisa, doctor of philosophy (Ph.D) in engineering, Associate professor** (RA, Yerevan) - Cadastr Committee, (+374)91471971, laradacent@gmail.com, **Tovmasyan Suren, doctor of philosophy (Ph.D) in geography, Associate professor** (RA, Yerevan) - Cadastr Committee, (+374)77100349, suren.tovmasyan@gmail.com, **Muradyan Vahagn, doctor of philosophy (Ph.D) in geography, Associate professor** (RA, Yerevan) - Cadastr Committee, (+374)94319346, muradyanvahagn85@gmail.com

Ներկայացվել է՝ 15.12.2022թ.

Գրախոսվել է՝ 11.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԾԱՎԱԼԱՏԱՐԱԾԱԿԱՆ  
ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Նարինե Էմիլի Մխիթարյան**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ  
nmxitaryan@yandex.ru*

*Դիտարկվում են Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի հորինվածքային առանձնահատկությունները՝ մասշտաբայնությունը, ծավալների ուրվագծային զարգացումը, հորինվածքային առանցքը, գույնը, լուսաստվերը, հրապարակի ողջ պարագծով զարգացող հզոր կամարաբացվածքների ռիթմը և գեղարվեստական հարդարանքը: Աշխատանքի նպատակն է, կատարելով հրապարակի ծավալատարածական հորինվածքի համապարփակ վերլուծություն, ներկայացնել համակառույցի ամբողջականությունը խաթարող այն պատճառները, որոնք ձևավորվեցին հատկապես վերջին տարիներին քաղաքի կենտրոնի տարերային կառուցապատման հետևանքով: Նորույթը կայանում է նրանում, որ կատարվել է հրապարակի տարածական հորինվածքի ամբողջականության ուսումնասիրում, այն խաթարող խնդիրների բացահայտում և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:*

***Բանալի բառեր.** ծավալատարածական հորինվածք, ամբողջականություն, քաղաքաշինական ուրվագիծ, հորինվածքային առանցք և դոմինանտ*

**Ներածություն**

ՀՀ մայրաքաղաք Երևանի «սիրտը» հանդիսացող Հանրապետության հրապարակը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում՝ Աբովյան, Նալբանդյան, Ամիրյան, Մարգարյան փողոցների և Տիգրան Մեծի պողոտան միավորող հանգույցում: Այն ընկած է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նախագծած, Երևանի գլխավոր հատակագծի հիմքում՝ հանդիսանալով քաղաքի կարևորագույն քաղաքաշինական հանգույցներից մեկը: Խորհրդային ժամանակաշրջանում այն կրում էր Լենինի անունը: Հրապարակի կառուցապատումը տևել է մոտ քառասուն տարի (1926-75 թթ.): Կառուցապատված լինելով տարբեր գործառույթներով հասարակական շենքերով՝ այն ընկալվում է որպես մեկ ամբողջական տարածական հորինվածք, ինչի շնորհիվ իր արժանվույն տեղն ունի ոչ միայն խորհրդային, այլ նաև համաշխարհային ճարտարապետության մեջ և մշտապես գտնվում է խորհրդահայ ճարտարապետությունն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Հանրապետության (Լենինի) հրապարակին նվիրված բազմաթիվ հետազոտություններ կան: Նշելի են Յարալովի [1], Վ. Հարությունյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Մելիքյանի [2], Մ. Գրիգորյանի [3], Լ. Զորյանի [4], Լ. Դոլուխանյանի [5] աշխատությունները: Վերջին տարիներին նույնպես անդրադարձ կա մայրաքաղաքի գլխավոր հրապարակին: Հրա-

պարակի ծավալատարածական հորինվածքի կազմավորմանն ու ապագա կազմակերպման խնդիրներին են անդրադարձել Գ. Ռաշիդյանը [6], Կ. Բայանը [7], Մ. Գասպարյանը [8]: Կան նաև բազմաթիվ հոդվածներ և գիտական ատենախոսություններ, որոնցում նույնպես անդրադարձ կա Երևանի քաղաքի գլխավոր հրապարակին: Տվյալ հետազոտությունում, կատարելով Հանրապետության հրապարակի կառուցապատման ընթացքի, բոլոր կառույցների առանձին և միասնական հորինվածքային վերլուծություն, տարածական հորինվածքի մասշտաբի, հորինվածքային առանցքի և հավասարակշռության, ուրվագծի, ինչպես նաև գեղարվեստական հարդարանքի համապարփակ վերլուծություն, խնդիր է դրվել բացահայտել հրապարակի նախնական ուրվագծի ամբողջական կերպարը և արդի փուլում դրա խաթարման պատճառները:

### **Նյութեր և մեթոդներ**

Ուսումնասիրվել են գիտական հայրենական գրականություն, արխիվային նյութեր, լուսանկարներ և չափագրություններ: Տեղում կատարված լուսանկարների և համեմատական վերլուծությունների հիման վրա կատարվել է համակարգված հետազոտում:

### **Արդյունքներ և քննարկում**

Երևանի Հանրապետության հրապարակը քաղաքի կարևոր հասարակական կենտրոններից ու խորհրդանիշերից մեկն է: Այն ունի ամբողջական ներդաշնակ հորինվածք: Թամանյանի նախագծած Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված էր Հանրապետության (Լենինի) հրապարակը հյուսիսային ճառագայթով միացնել քաղաքի մյուս կարևոր հանգույցին՝ Թատերական հրապարակին: Նա նախատեսել էր, որ հյուսիս-հարավ առանցքի եզրագծերը պետք է շեշտվեին երկու թմբուկներով՝ Կառավարական տան (թմբուկը չիրականացվեց) և Օպերայի շենքի: Ըստ Թամանյանի՝ երկու դոմինանտ ծավալները միացնող առանցքն ուղղված էր դեպի Արարատ բիրլիական լեռը, որի գերիշխող դերը շեշտվում էր թամանյանական Երևանի ողջ համայնապատկերում [7]: Չնայած այն բանին, որ Կառավարական տան թմբուկը չիրականացվեց, հրապարակի համակառույցի բոլոր շենքերը կառուցվեցին՝ հիմք ընդունելով հենց այդ կառույցի ճարտարապետական հորինվածքային լուծումը: Այն, իր մասշտաբով, դիրքով, ճարտարապետական հորինվածքով ոչ միայն կանխորոշեց և պայմանավորեց Երևանի գլխավոր հրապարակի համակառույցի բոլոր շենքերի ծավալատարածական հորինվածքային լուծումները, այլ հիմնաքար դարձավ այդ կարևոր հանգույցի ճարտարապետական կերպարի ձևավորման համար [9]:

Հրապարակի կառուցապատումն ընթացել է մի քանի փուլերով՝ պահպանելով Թամանյանի գլխավոր հատակագծում նախատեսված օվալաձև հորինվածքը (նկ. 1): Այն տևել է 1926-1975 թթ. հետևյալ հերթականությամբ՝

1. Կառավարական 1-ին տունը – 1926 թ., ճարտարապետ Ալեքսանդր Թամանյան, ավարտել է որդին՝ Գևորգ Թամանյանը 1941 թ.,

2. Կառավարական 2-րդ տունը – 1947 թ., ճարտարապետներ Սամվել Սաֆարյան, Վարազդատ Արևշատյան, սկզբնական շրջանում նաև՝ Ռաֆայել Իսրայելյան,
3. Կապի շենքը – 1933-56 թթ., ճարտարապետներ Մարկ Գրիգորյան և Էդուարդ Սարապյան,
4. Լենինի արձանը պատվանդանով – 1939-40 թթ., քանդակագործ՝ Մերգել Մերկուրով, ճարտարապետներ՝ Նատայա Փարեմուզովա, Լևոն Վարդանով: Արձանն ապամոնտաժվել է 1991 թ., պատվանդանը՝ 1996 թ.,
5. «Արմենիա» («Մարիոթ») հյուրանոցը – 1958 թ., ճարտարապետներ՝ Մարկ Գրիգորյան և Էդուարդ Սարապյան,
6. Հայաստանի Պատմության թանգարանի և Պատկերասրահի շենքը, 1958 թ. մինչև 1975 թ., ճարտարապետ՝ Մարկ Գրիգորյան և Էդուարդ Սարապյան [8]:



*Նկ. 1. Երևանի հանրապետության հրապարակը*

Համաշխարհային ճարտարապետության մեջ բազմաթիվ են շրջանաձև կառուցապատում ունեցող հրապարակների օրինակները: Դրանք հանդիպում են հատկապես վերածննդի, բարոկկոյի և կլասիցիզմի շրջաններում: Ինչպես Երևանի, այնպես էլ բազմաթիվ քաղաքների գլխավոր հրապարակներն ունեն լայնարձակ պարագծային կառուցապատում, հերոսական մասշտաբից բխող մոնումենտալություն և հորինվածքային ամբողջականություն: Լավագույն օրինակներից են Սբ Պետրոսի տաճարային հրապարակը Հռոմում, Պալատական հրապարակը Սանկտ Պետերբուրգում, Համաձայնության, Աստղի, Իտալիայի, 16-րդ կորպուսի հրապարակները Փարիզում և այլն [6]: Խորհրդահայ շրջանում Երևանում նույնպես ստեղծվեցին մեծ ու փոքր շրջանաձև հորինվածքով հրապարակներ՝ Հանրապետության, Գարեգին Նժդեհի, Շարոլ Ազնավուրի, Սախարովի և այլն:

Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցն ունի միասնական հորինվածք՝ չնայած այն հանգամանքին, որ կառուցապատվել է աստիճանաբար, տարբեր ճարտարապետների կողմից: Բոլոր կառույցները համահունչ են իրենց մասշտաբայնությամբ, գույնով՝ պայմա-

նավորված վարդագույն տուֆով և դեղնավուն, կաթնագույն ֆելզիտային տուֆով, դասական մոնումենտալ ծավալատարածական հորինվածքով, կամարաշարերի և սյունաշարերի ռիթմով, ինչպես նաև արտաքին գեղարվեստական հարդարանքում տեղ գտած զարդաքանդակներով: Այն ասես կառուցվել է միանգամից, մեկ «շնչով» և ձեռագրով: Պետք է նշել, որ այդպիսի ամբողջական հորինվածքի համար մեծ դեր ունի այդ ժամանակաշրջանում Երևանի կառուցապատման համար ճարտարապետների ընտրած միասնական ճարտարապետական լեզուն՝ «թամանյանականը», որի ձևավորման համար սկզբնաղբյուր հանդիսացավ հրապարակի առաջին կառույցը՝ Թամանյանի հեղինակած Կառավարական տունը: Նրա հիմնադրած և հատկապես այդ կառույցում տեղ գտած մի շարք մեթոդների կիրառմամբ «թամանյանականներին» հաջողվեց կազմավորել ստեղծագործական մի ուղղություն, որը ձևավորեց ոչ միայն կենտրոնական հրապարակի, այլ նաև Երևան քաղաքի կենտրոնի (մինչև անկախացումը) միասնական կերպարը:

### ***Հանրապետության հրապարակի ծավալատարածական հորինվածքը***

Երևանի Հանրապետության հրապարակը կիսապարփակ շրջանաձև զարգացող տարածական հորինվածք է՝ կազմակերպված տարբեր գործառույթներով հասարակական շենքերով՝ երկու կառավարական, կապի նախարարության, հյուրանոց և թանգարան: Տարածական հորինվածքների (հրապարակներ, բակեր, պողոտաներ) կազմակերպման մեջ կարևոր դեր ունեն հորինվածքային առանցքն ու դոմինանտ ծավալը [10]: Հանրապետության հրապարակն ունի սիմետրիկ հորինվածք՝ շեշտված առանցքով, որը և հանդիսանում է ամբողջ տարածական հորինվածքի զարգացման գլխավոր ուղղությունը: Սիմետրիայի առանցքն ուղղված է դեպի թանգարանի շենքը: Խորհրդային շրջանում այն եզրափակվում էր Լենինի արձանով: Մինչև արձանի և պատվանդանի ապամոնտաժումը հրապարակի հորինվածքային առանցքը կապում էր երկու ծավալները՝ Լենինի մոնումենտալ արձանը թանգարանի շենքին: Արձանը հրապարակի համակառույցում առանձնանում էր իր ուղղաձիգ զարգացող հորինվածքով, գույնով (գրանիտ), ֆունկցիոնալ նշանակությամբ: Այն, ի տարբերություն հրապարակի մյուս տարածաստեղծ կառույցների, հուշարձան-կոթող էր, որը պատվանդանի՝ ազգային ակունքներից բխող զարդաքանդակային մշակումով, ներդաշնակ էր հրապարակի համակառույցի մյուս շենքերի արտաքին հարդարանքին: Արձանի և պատվանդանի ապամոնտաժումից հետո դոմինանտ «միանձնյա դերը ստանձնեց» թանգարանի շենքը՝ դեպի հրապարակ ուղղված բաց կամարասրահով և շեշտված բարձր, զանգվածեղ թմբուկով: Այն ունի հստակ սիմետրիկ հորինվածք, որը, կառույցին հաղորդելով հավասարակշռվածություն և ստատիկություն, ավելի է կարևորում գերիշխող դերը ողջ տարածական հորինվածքում:

Հրապարակի օվալաձև (ձվածիր) հորինվածքով թելադրված՝ չորս, միմյանց նկատմամբ սիմետրիկ տեղադրված կառույցներն ունեն երկմաս կառուցվածք՝ կորագիծ և ուղղագիծ ծավալներով համադրված: Կառավարական շենքերը, սիմետրիկ տեղադրված թանգարանի շենքի երկու կողմերում, ընդգծված են ուղղաձիգ աշտարակներով, որոնք, միացնելով այդ կառույցների ուղղագիծ և կորագիծ ծավալները, ավելի են շեշտում տարածական միջավայրի սիմետրիկու-

թյունը: Հրապարակի կորագիծ ծավալների ուրվագծի դինամիկ զարգացումը մարում է՝ հանդիպելով թանգարանի շենքի ստատիկ զանգվածեղ ծավալին: Հրապարակի ողջ ուրվագիծը ձևավորվում և զարգանում է միննույն բարձրությամբ կապի և հյուրանոցի շենքերով, այնուհետև այդ դինամիկան ուղղորդվում է դեպի կառավարական շենքերը, հանդիպելով ուղղաձիգ աշտարակներին՝ «հավասարակշռության նժարներին», ավելի ցածր ուղղագիծ ծավալներով ուղղվում է դեպի թանգարանի ստատիկ ծավալը: Ուրվագծի նման զարգացմամբ էլ ողջ միջավայրում դոմինանտ է դառնում թանգարանի շենքը (նկ. 2):



**Նկ. 2. Հանրապետության հրապարակը**

Վերջին տարիներին հրապարակի հարևանությամբ իրականացվեց բարձրահարկ կառուցապատում, որն ինչ-որ չափով խաթարեց այն ամբողջականությունը, որն ընկած էր կառուցապատող ճարտարապետների միասնական մտահղացման հիմքում: Հյուսիսային կողմում վեր են խոյացել հյուսիսային պողոտայի շենքերը, որոնք իրենց մասշտաբով նսեմացրել են ոչ միայն հրապարակի, այլ նաև Օպերայի շենքի գերիշխող դերը: Արևմտյան համայնապատկերում հորինվածքային ամբողջականությունը նույնպես խաթարում են բարձրահարկ կառույցները: Հատկապես ցերեկային ժամերին որոշ բարձրահարկ շենքեր խախտում են համակառույցի ուրվագծի հավասարակշռությունը, համընդհանուր մասշտաբը, ծավալների դինամիկ զարգացման ռիթմը (նկ. 3): Կարելի է նշել, որ հրապարակն իր գերիշխող քաղաքաշինական դերը կորցրել է շրջակա միջավայրի բարձրահարկ կառուցապատման հետևանքով:



**Կառավարական 2-րդ տունը**



*Թանգարանի շենքը*



*Կապի շենքը*

*Նկ. 3. Հրապարակի համայնապատկերը խորհրդահայ շրջանում և անկախությունից հետո*

**Դասական համաչափությունները հրապարակի տարածաստեղծ հորինվածքում**

Դասական ճարտարապետության սկզբունքներին հավատարիմ, հրապարակն ունի լայնարձակ հորինվածք, կազմակերպված միմյանց նկատմամբ սիմետրիկ տեղադրված շենքերով՝ ընդգծված սիմետրիայի առանցքով: Այն ունի մոնումենտալ հերոսական մասշտաբ: Հրապարակի բոլոր կառույցները համահունչ են իրենց ծավալատարածական հորինվածքով (կազմակերպված ուղղագիծ և կորագիծ ծավալներով), մասշտաբայնությամբ, հորիզոնական ձգվածությամբ, որն այդ կառույցներին հաղորդում է կարևոր տարածաստեղծ դեր, կամարաշարերի, խոշոր և մանր օրդերի ռիթմիկ ջլատումներով, կառույցների ճակատային հորինվածքներում դեպի վեր թեթևացման սկզբունքի կիրառմամբ: Համակառույցի բոլոր շենքերի առաջին և երկու հարկերը ձևավորված են միևնույն բարձրությամբ մեծ թռիչքներով, զանգվածեղ կամարաշարերով, որոնք ասես օղակում են հրապարակի օվալը: Միևնույն բարձրությամբ անցնող քիվերը և ժապավենաձև զարդաքանդակներն ընդգծում են կառույցների հորիզոնականությունը: Վերին հարկերով անցնող բաց սյունասարահները թեթևություն են հաղորդում կառույցներին, միաժամանակ սյունաշարերի մետրիկ շարքերն ավելի են շեշտում կառույցների ճակատների հորիզոնական զարգացումը և ուղղահայաց դեպի վեր թեթևացող ռիթմը՝ բնորոշ դասական ճարտարապետության սկզբունքներին: Նմանատիպ լուծումներ ունեն համաշխարհային ճարտարապետության դասական (կլասիցիզմի) հրապարակները: Լավագույն օրինակներից է Սանկտ Պետերբուրգի պալատական հրապարակը, որտեղ նույնպես առկա է ընդգծված հորիզոնական զարգացումը, խոշոր և մանր օրդերի կիրառությունը և սիմետրիան: Ի տարբերություն Երևանի գլխավոր հրապարակի,

Մանկտ Պետերբուրգի հրապարակի շրջակայքում պահպանվել է պատմականորեն ձևավորված կառուցապատումը և չի խաթարվել տարածության հորինվածքային ամբողջականությունը:

### ***Գույնը և լուսաստվերը***

Հորինվածքաստեղծ տարրերի կարևոր օբյեկտիվ հատկանիշներից են գույնը և լուսաստվերը, որոնք էական դեր են խաղում տարածական հորինվածքի գեղարվեստական արտահայտչականության մեջ [11]: Հրապարակի տարածաստեղծ կառույցների գունային երանգապնակում կարևոր դեր ունի շինանյութը: Յուրաքանչյուր կառույցի երեսապատման համար օգտագործված են տարբեր երանգների քարեր. Կառավարական 1-ին, հյուրանոցի և կապի շենքերն իրականացված են տարբեր երանգների վարդագույն տուֆերի համադրությամբ, կառավարական 2-րդ և թանգարանի շենքերը՝ դեղնավուն և կաթնագույն ֆելզիտային տոֆով: Այդպիսի տարբերությունը, կարծում ենք, արվել է ոչ ինքնանպատակ: Այդ կառույցները ներկայացնում են հրապարակի հյուսիսային-արևմտյան ճակատները և, բաց գույնով պայմանավորված, ունեն լուսաստվերի ուժեղ հակադրություն, որը համահունչ է ավելի մուգ երանգի մյուս շենքերին: Բոլոր կառույցների ողջ ներկայակում առկա գունային նրբերանգն ավելի է ընդգծում տարածական հորինվածքի հարմոնիկ ամբողջականությունն ու ռիթմիկ զարգացումը:

Ինչպես նշվեց, հրապարակի համակառույցի գեղարվեստական ներդաշնակ արտահայտչականության մեջ կարևոր դեր ունի նաև լույսն ու ստվերը: Հորինվածքաստեղծ բոլոր կառույցների ճակատային հարթությունների կորագիծ մասերի առաջին հարկերը մշակված են փնջաձև սյունափնջերին մարող աստիճանաձև զարգացող կամարաշարերով, իսկ ուղղագիծ ծավալները՝ գույգ սյուների և խորշերի ջլատումներով, որոնք օրվա բոլոր ժամերին կառույցների ճակատներին հաղորդում են լուսաստվերային հարուստ խաղ և արտահայտչականություն: Լույս ու ստվերի ռիթմն ավելի է հարստանում վերին հարկերի բաց պատշգամբները հարդարող սյունասրահների մետրիկ շարքերի և պատերի հարթություններում տեղ գտած քանդակագարդ գոտիների և որմնախոյակների հարուստ զարդամոտիվներով: Լուսաստվերի միջոցով առաջացած կոնտրաստն ավելի է մեծացնում տարածաստեղծ կառույցների գեղարվեստական արտահայտչականությունը [12]:

### ***Հրապարակի համակառույցի գեղարվեստական դեկորատիվ հարդարանքը***

Հրապարակի ողջ համակառույցի գեղարվեստական հարդարանքի հիմքում ընկած է կամարաշարերի և սյունաշարերի ռիթմիկ շարքերի, ինչպես նաև ազգային ակունքներից բխող զարդաքանդակների թեման: Այն լուծումները, որոնք կիրառել էր Թամանյանը Կառավարական 1-ին տան ճակատային հարթությունների մշակումներում, իրենց տեղը գտան նաև հանդիպակաց կառույցում՝ Կառավարական 2-րդ տանը [13]: Այդ երկու կառույցների ճակատների հարդարման ժամանակ հեղինակները տարբեր ձևով են մոտեցել ազգային ժառանգության օգտագործման խնդրին: Թամանյանը, հենվելով վաղմիջնադարյան ճարտարապետական գլուխգործոցների՝ Զվարթնոցի (7-րդ դ.) և Տեկորի (6-րդ դ.) տաճարների առանձին մանրամասների վրա, ստեղծել է սյունակարգերի նոր հորինվածքներ: Կառավարական 1-ին տան կորագիծ ծավալի

կամարաշարի որմնախոյակները լուծված են Տեկորի տաճարի շքամուտքի որմնախոյակների, իսկ ուղղագիծ ծավալների ճակատային հարթությունների որմնախորշերի որմնասյուների խոյակները՝ Զվարթնոցի տաճարի սյուների խոյակների ստեղծագործական մշակմամբ [9]: Կառավարական 2-րդ տան հարդարանքում հեղինակները յուրահատուկ ձևով են կիրառել Տեկորի, Զվարթնոցի և Թալինի (7-րդ դ.) տաճարների առանձին մանրամասները [14]: Այդ կառույցի կորագիծ ճակատային հատվածը ջլատված է առաջին և երկրորդ հարկերի բարձրություն ունեցող ութ սյունափնջերի վրա հանգչող յոթ կամարաբացվածքներով, որոնց վերևով՝ երրորդ հարկով, անցնում է կամարաձև նեղ պատուհանների մետրիկ շարքը, իսկ չորրորդ հարկը կազմակերպված է գույգ սյուներով սյունասրահով: Այս կառույցում սյունափնջերը եռամաս են՝ կազմված առաջին պլանի քանդակագարդ կամարը կրող մեկ ընդհանուր խարսխով և խոյակով պսակված գույգ շրջանաձև հատույթով սյուներից (ինչպես Տեկորի տաճարի շքամուտքինը և Կառավարական տան սյունափնջերինը) և երկրորդ պլանի կամարը կրող քառորդ խոյակով պսակված երկուական կիսասյուներից: Նույնատիպ լուծում ունեն նաև խոյակները, որոնք հարթ են ու մշակված բուսական մոտիվներով այնպես, որ յուրաքանչյուր սյունափնջինը մյուսներից տարբերվում է զարդամոտիվների բազմազանությամբ և դրանց գեղարվեստական մեկնաբանությամբ: Զարդաքանդակները նույնպես իրականացված են «թամանյանական» փնջաձև խոյակի՝ մեջտեղում ամբողջական, իսկ անկյուններում կես տերևափնջերով զարդաձևերով [15]: Նմանատիպ լուծում ունեն նաև թանգարանի շենքի դիմացի սյունասրահի կամարաշարերի որմնասյուները: Դրանք պսակված են ընդհանուր խոյակներով, որոնք իրենց հորինվածքով կրկնում են Կառավարական տան գլխավոր մուտքի փնջաձև սյուների խոյակների հորինվածքը: Զարդամոտիվները նույնպես ստեղծված են հաջորդաբար տեղադրված միանման ճյուղերի մետրիկ շարքերով (ինչպես Կառավարական տան վերոհիշյալ խոյակներինը): Այս զարդամոտիվներում, բացի տերևազարդից, տեղ են գտել նաև հայկական ավանդական ճարտարապետությանը բնորոշ բուսական զարդամոտիվներ՝ նռան ճյուղեր պտուղներով, խաղողի ողկույզներ և այլն (նկ. 4):



Նկ. 4. Կառավարական 1-ին և 2-րդ տների որմնասյուները

Կառավարական 2-րդ տան ճակատային հորինվածքի ուղղաճիճ մասը նույնպես ենթարկված է կամարաշարերով մետրիկ ջլատումների՝ առաջին և երկրորդ հարկի մակարդակով անցնում է զույգ սյուներով կամարաշարը: Զույգ սյուներով որմնասյուների խոյակը երկմաս է. մեկ ընդհանուր քառանկյուն վերնասալի տակ ամփոփված են զույգ սյուները պսակող քանդակազարդ խոյակները, որոնցում տեղ է գտել զարդարվեստում, ինչպես նաև հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ ընդունված զույգ ծաղիկների բուսական զարդամոտիվը [16]: Այն, կարելի է ենթադրել, ստեղծվել է Զվարթնոցի տաճարի, Թալինի Մայր տաճարի արտաքին պատերի որմնասյուների ստեղծագործական մշակման արդյունքում (նկ. 5):



*Տեկորի տաճար (5-րդ դ.)*



*Զվարթնոցի տաճար (7-րդ դ.)*



*Թալինի Մայր տաճար (7-րդ դ.)*



*Կառավարական 1-ին տուն*



*Կառավարական 2-րդ տուն*




*Թանգարանի շենք*

*Նկ. 5. Հրապարակի համակառույցի շենքերի խոյակները*

Բոլոր որմնասյուների խոյակների զարդանախշերը նույնությամբ կրկնվում են: Այդ կամարասրահի վերևով՝ երրորդ հարկով, անցնում է բաց կամարասրահը, որտեղ առանձին կանգնած սյուների առանցքները համընկնում են ներքևի զույգ սյուների և կամարների զագաթներով անցնող առանցքների հետ: Այդ սյուները երկմաս են, առանց խարսխի, կազմված են խոյակից և բնից: Խոյակները կրկնում են վերոհիշյալ զարդամոտիվը (նկ. 5):

Հյուրանոցի և Կապի շենքերի ճակատային հարթությունների կորագիծ ճակատները մշակված են բարձր, երկու հարկերն ընդգրկող կամարաբացվածքներով՝ քանդակագարդ կամարաղեղներով: Զարդաքանդակներն ակնառու աղերսներ ունեն հայկական միջնադարյան ճարտարապետության հետ: Հայկական միջնադարյան ճարտարապետությանը հավատարիմ, բոլոր աստիճանաձև զարգացող կամարները և դրանք կրող որմնասյուները հարդարված են միմյանցից տարբերվող զարդամոտիվներով, որոնցում տեղ են գտել բուսական, կենդանական, և երկրաչափական մոտիվները: Նմանատիպ զարդաքանդակային մշակումներ ունեն նաև կառավարական երկու շենքերի կամարաբացվածքների կամարաղեղները [17]: Նշենք, որ բոլոր կառույցների կամարաշարերի վերևում շքեղ, քանդակագարդ զարդագոտիներ են՝ հարուստ հյութեղ զարդաքանդակներով (նկ. 6):



*Նկ. 6. Հրապարակի համակառույցի շենքերի արտաքին հարդարանքը*

Հրապարակի համակառույցի բոլոր շենքերի (բացի թանգարանի) վերևի հարկերը մշակված են միննույն բարձրությամբ բաց սյունասրահներով, որոնք թեթևություն են հաղորդում կառույցներին և միաժամանակ ընդգծում են հորիզոնական կապը: Բոլոր կառույցների սյունասրահների սյուները դորիականատիպ են: Դրանք երկմաս են՝ բուն և խոյակ, բացակայում է խարիսխը: Բոլոր կառույցների արտաքին գեղարվեստական հարդարանքի միջոցները համահունչ են և ներդաշնակ:

### Եզրակացություն

Երևանի Հանրապետության հրապարակը միասնական մտահղացմամբ ստեղծված տարածական հորինվածք է՝ կառուցապատված դասական ճարտարապետության սկզբունքներին հավատարիմ: Այն իր դասական համաչափություններով, մասշտաբով, կամարաշարերի և սյունաշարերի ռիթմիկ ջլատումներով, ազգային ակունքներից բխող զարդամոտիվներով, գույնով և լուսաստվերով ունի ամբողջական տարածական հորինվածքային լուծում: Հրապարակը կառուցապատող ճարտարապետներն իրենց առջև խնդիր էին դրել ստանալ մայրաքաղաքի գլխավոր հրապարակին հարիր մոնումենտալ ամբողջական տարածական հորինվածք: Այդ խնդիրը լուծվել էր հաջողությամբ և հրապարակն իրավամբ պատվավոր տեղ ուներ ոչ միայն խորհրդային հանրապետությունների, այլ նաև աշխարհի լավագույն հրապարակների կողքին: Սակայն, Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո (1991թ.) հրապարակի համայնապատկերում վեր խոյացած բարձրահարկ կառուցապատումը որոշ չափով խաթարել է այդ տարածական հորինվածքի միասնական կերպարը և այն որոշակիորեն կորցրել է իր ամբողջական ընկալումը: Այդ խնդիրն ինչ-որ չափով հնարավոր է լինում լուծել գիշերային լուսավորության պայմաններում, երբ հրապարակն ընկալվում է միայն իր դինամիկ զարգացող ուրվագծով, լուսաստվերային հարուստ խաղով: Ցերեկվա ժամերին հրապարակի ամբողջական ընկալումը կարելի է պահպանել՝ կատարելով մի շարք միջոցառումներ: Օրինակ, կարելի է հրապարակի համայնապատկերում գերիշխող դեր խաղացող կառույցները պասիվացնել՝ դրանց ճակատային հարթությունները մշակելով բուսածածկերով կամ Երևանի բնական լանդշաֆտը ներկայացնող պատկերներով՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

### Գրականության ցանկ

- [1] **Ю.С. Яралов**, Таманян. Гос. изд-во арх-ы и град., Москва, 1950, 165 с.
- [2] **В.М. Арутюнян, М.М. Асратян, А.А. Меликян**, Ереван. Изд. лит. по строительству, Москва, 1968, 302 с.
- [3] **М. Григорян**, Площадь Ленина в Ереване. Воспоминания о проектировании и строительстве. Айастан, Ереван, 1969, 96 с.
- [4] **Л. Зорьян**, Таманян. Советакан грох, Ереван, 1978, 38 с.
- [5] **Л.К. Долуханян**, Архитектура Советской Армении (20-е годы). Советакан грох, Ереван, 1980, 84 с.

- [6] **Г.Г. Рашидян**, Главная площадь Еревана во времени и в пространстве. ЕГУАС, Ереван, 2007, 155 с.
- [7] **К. Бальян**, Город, смотрящий на Арарат. Тексты разных лет. Москва, 2009, 59 с.
- [8] **Մ.Ս. Գաապարյան**, Երևանի արդի ճարտարապետության ձևավորման ուղղությունները. Մենագրություն. ՃՇՀԱՀ, Երևան, 2022, 175 էջ:
- [9] **Ն.Է. Մխիթարյան**, Երևանի Հանրապետության հրապարակի Կառավարական տան գեղարվեստական հարդարանքը: ՃՇՀԱՀ գիտ. աշխ.2 (83), (2022) 67-78:
- [10] **А.В. Иконников**, Пространство и форма в архитектуре и градостроительстве. URSS, Москва, 2006, 352 с.
- [11] **А.В. Степанов и др.**, Объемно-пространственная композиция. Архитектура-С, Москва, 2007, 256 с.
- [12] **Н.Г. Стасюк и др.**, Основы архитектурной композиции. Архитектура-С, Москва, 2004, 96 с.
- [13] **Ю. Сафарян, А. Бархударян**, Зодчий Самвел Сафарян, Ереван, 2007, 364 с.
- [14] **М.М. Асратян**, Армянская архитектура раннего христианства. Инкомбук, Москва, 2000, 400 с.
- [15] **Ն.Է. Մխիթարյան**, Խոյակը խորհրդահայ ճարտարապետության մեջ: Ատենախոսություն ճարտ. թեկն. գիտական աստիճանի հայցման, Երևան, 2008, 143 էջ:
- [16] **Ա. Շ. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ: ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1955, 659 էջ:
- [17] **N.Mkhitaryan, Sh.Avedian**, Architecture: stages and features of compositional formations of khachkars. Journal of Architectural and Engineering Vesearch 2 (2022) 52-58.

## АНАЛИЗ ОБЪЕМНО-ПРОСТРАНСТВЕННОЙ КОМПОЗИЦИИ ПЛОЩАДИ РЕСПУБЛИКИ ЕРЕВАН

**Нарине Эмильевна Мхитарян**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА  
nmkhitaryan@yandex.ru*

*Рассмотрены композиционные особенности ансамбля площади Республики Еревана: масштабность, силуэтное развитие объемов, композиционная ось и доминанта, цвет, светотень, ритм мощных арок, развивающихся по всему периметру площади, и художественное убранство. Цель работы, выполнив комплексный анализ объемно-пространственной композиции площади, представить причины, нарушающие целостность ансамбля, которые образовались в результате стихийной застройки центра города, особенно за последние годы. Новизна заключается в том, что изучена целостность пространственной композиции площади, выявлены проблемы, нарушающие ее, и даны рекомендации по их устранению.*

**Ключевые слова:** *объемно-пространственная композиция, целостность, градостроительный силуэт, композиционная ось и доминанта*

**ANALYSIS OF THE VOLUMETRIC-SPATIAL COMPOSITION  
OF THE REPUBLIC SQUARE OF YEREVAN**

**Narine Mkhitarian**

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA  
nmxitaryan@yandex.ru*

*In the following article the compositional features of the ensemble of the Yerevan Republic Square are considered: scalability, silhouette development of volumes, compositional axis, color, chiaroscuro, the rhythm of powerful arches developing around the entire perimeter of the square and artistic decoration. The aim of the study is, after performing a comprehensive analysis of the volumetric-spatial composition of the square, to present the reasons that violate the integrity of the ensemble. The latter was formed as a result of the spontaneous building of the city center, particularly in recent years. The novelty arises from the fact that the integrity of the spatial composition of the square has been studied, problems that violate it have been identified, and recommendations have been given for their elimination.*

**Keywords:** *volumetric-spatial composition, integrity, urban silhouette, compositional axis and dominant*

**Մխիթարյան Նարինե Էմիլի, ճ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմության և ժամանակության ամբիոն, (+374)94479594, (+374)55641728, nmxitaryan@yandex.ru

**Мхитарян Нарине Эмильевна**, канд. арх., доцент (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теории архитектуры, истории и наследия, (+374)94479594, (+374)55641728, nmxitaryan@yandex.ru

**Mkhitarian Narine, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Theory, history and heritage (+374)94479594, (+374)55641728, nmxitaryan@yandex.ru

Ներկայացվել է՝ 19.12.2022թ.

Գրախոսվել է՝ 11.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.

**ԲԱՐՁՐ ՃՇՏՈՒԹՅԱՆ ԼԱԶԵՐԱՅԻՆ ԴԵՖՈՐՄԱՄԵՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԻ ՄՇԱԿՈՒՄ**

**Հովսեփ Սերգեյի Պետրոսյան՝ Ազատ Լիպարիտի Սմբատյան, Տաթևիկ Ռոբերտի Խաչիկյան**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ*

*Hovsep-petrosyan@mail.ru*

*Լազերային դեֆորմամետրի ստեղծման համար մշակվել է հետևյալ մեթոդը. լազերային ճառագայթն ընդունվում է հսկիչ կետում տեղակայված լազերային սովիչից, անդրադարձած լույսը գրանցվում է ֆոտոէլեմենտային մատրիցայում, որից հետո դիտարկված սվյալները փոխանցվում են դեկավարման հանգույցին, որտեղ կատարվում է սվյալների վերլուծություն և թափամեղման (բուֆերացման) գործողություններ, ինչից հետո մշակված սվյալները փոխանցվում են համակարգիչ: Համակարգչում ներդրված ծրագրի շնորհիվ ստացված սվյալներով հաշվարկվում և գրաֆիկորեն ցուցադրվում են լազերային ընդունիչում գրանցված փոփոխությունները: Ըստ բանաձևերով մշակված տեսական սվյալների կարելի է ապահովել վերազանցումների որոշման ճշտությունը 40 մկմ, իսկ ընտրված սվիչն ապահովում է մոտ 200 մկմ քայլային ճշտություն:*

***Բանալի բառեր.** լազերային դեֆորմամետր, հսկիչ կետ, վերազանցումներ, համակարգչային ծրագիր, սվյալներ, ընդունիչ*

### **Ներածություն**

2021 թ. ՃՇՀԱՀ-ում որպես «Գիտահետազոտական աշխատանքների իրականացման ներքին դրամաշնորհային մրցույթ» իրականացվել են աշխատանքներ «Լազերային դեֆորմամետրի նախագծում և պատրաստում» թեմայով: Նշված թեմայի շրջանակում մշակվել է լազերային դեֆորմամետրի ստեղծման տեխնիկական նախագիծ:

Համաձայն լազերային դեֆորմամետրի ստեղծման համար մշակված տեխնիկական նախագծի 8-րդ կետի [1], մշակվել է դեֆորմացիաների որոշման հաշվարկի ալգորիթմ, որով կիրականացվի ինչպես լազերային սովիչից լազերային դեֆորմամետր, այնպես էլ լազերային սովիչների միջև տարբերության (նստվածքի) գնահատում:

### **Նյութեր և մեթոդներ**

Շահագործման ընթացքում ցանկացած նշանակության կառույցների հիմքերն ու առանձին կոնստրուկցիաները ենթարկվում են ձևախախտումների: Այդ ձևախախտումների որոշման գեոդեզիական չափագրման հիմնական եղանակներն են՝ բարձր դասի երկրաչափական նիվելիրացումը [2-5] և հիդրոնիվելիրացումը [6-9]:

Ներկայումս ՀՀ-ում ձևախախտումների որոշման ձևաչափը կարգավորվում է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերով [10-13]: Երկրաչափական նիվելիրացման եղանակը հիմնականում կիրառվում է ձևախախտման հսկիչ կետերի տեսանելիության դեպքում, իսկ տեսանելիության բացակայության դեպքում նպատակահարմար է կիրառել հիդրոդինամիկական նիվելիրացում:

### Արդյունքներ և քննարկում

Նոր ստեղծվող Լազերային դեֆորմամետրի չափագրման սկզբունքը հանդիսանում է ոչ թե գործիքով անմիջապես չափման միջոցով հսկիչ կետերի միջև որոշելու վերազանցումներ, այլ մշակվել է համակարգ, որում ընդգրկված են տվիչների հանգույցը՝ տեղեկատվության գրանցման համար, և դեկավարման հանգույցը, որտեղ տեղադրված է PIC16F57Q84 միկրոստուգիչը, որով ընդունվում և մշակվում են տվիչներից եկած ազդանշանները և այդ տվյալները հատուկ միջարկի (ինտերֆեյս) միջոցով փոխանցվում են համակարգիչ՝ տվյալների վերլուծում և արտաբերում կատարելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ է մշակել նոր ալգորիթմ:

Ալգորիթմի մշակման համար ուսումնասիրվել են տեխնիկական առաջադրանքի և տեխնիկական նախագծով նախատեսված բոլոր պահանջները, որի հիմքով ստեղծվել է չափագրման նոր համակարգ, որով հսկիչ կետերի նստվածքները կորոշվեն ոչ թե վերազանցումների ուղղակի չափման միջոցով, այլ վերազանցումը կորոշվի հսկիչ կետում տեղադրված լազերային ընդունիչում գրանցված, յուրաքանչյուր կետում սևեռված լազերային տվիչից՝ ճառագայթի տեղաշարժով:

Մշակված ալգորիթմի էությունը հետևյալն է. տվյալների վերլուծության և թափամեղման գործողություններից հետո մշակված տվյալները COM մատույցով (պորտով) փոխանցվում է համակարգչային ծրագրին, որում կատարվում է տվյալների մշակում և ընդունիչում գրանցված դեֆորմացիաները ցուցադրվում են գրաֆիկի տեսքով:

Համաձայն [1]-ում տրված սխեմայի (նկ. 1), ճառագայթն անշարժ պատվանդանին ամրացված լազերից ուղղահայաց ընկնում է պատին ամրացված հայելուն, այդ դեպքում տվիչի վրա ընկնող փոփոխությունը կհաշվարկվի՝

$$x = y/\sin\alpha, \quad (1)$$

իսկ հաջորդ փուլերում դիտարկման ժամանակ փոփոխությունը կորոշվի՝

$$\Delta x = \Delta y/\sin\alpha, \quad (2)$$

որտեղ  $y$ -ը հաշվարկվող դեֆորմացիան է, իսկ  $x$ -ը՝ տվիչի վրա ընկնող ազդանշանի փոփոխությունը: Որպեսզի հաշվարկվող  $y$  դեֆորմացիան ավելի ճշգրիտ հաշվարկվի, անհրաժեշտ է  $\alpha$ -ի արժեքը ընդունել  $1^\circ$ -ից մինչև  $10^\circ$  տիրույթում: Համաձայն (2) հավասարման, կարելի է նշել, որ ինչքան փոքր է  $\alpha$ -ի արժեքը, այնքան ճշգրիտ կարելի է որոշել տվիչի վրա ընկնող ազդանշանի փոփոխությունը: Աղյուսակում տրված են ըստ անկյունների աճման փոփոխության  $\sin\alpha$  ֆունկցիայի արժեքները [14]: Դեֆորմամետրի դեկավարման հանգույցում տեղադրված տվիչի ճշտությունը կազմում է 200 մկմ, որը հանդիսանում է ըստ  $\sin\alpha$  արժեքի քայլային գործակից:



Առկա է 4 տվիչ, որոնցից յուրաքանչյուրն ունի 64 պիքսել: 16-ական համակարգով տվյալները, որոնք համակարգչային ծրագրում նախնական ունեն *string* տիպ՝ վերափոխվում են *unsigned int* տիպի, ինչից հետո վերածվում են մատրիցաների և զանգվածների: Ծրագրային կողմում կատարված հաշվարկներով որոշվում է եկած տվյալներից մեծագույնի արժեքը, որն էլ լազերային ճառագայթի կենտրոնն (կիզակետ) է: Արդյունքում ընդունիչում գրանցված փոփոխություններն արտապատկերվում են գրաֆիկական տեսքով:

Ծրագրային կողմը գրվել է *NodeJs* ծրագրավորման լեզվով [15]:


Լազերային դեֆորմամետրը միացվել է COM մատույցին, որպեսզի ստացվեն տվյալները [16]: Օգտագործվել է *Socket IO* [17], որպեսզի *NodeJs*-ից դեպի *Web Interface* տվյալներ փոխանցվի: Կատարելով համապատասխան հաշվարկներ՝ *xy* հարթության վրա արտապատկերվում են գրանցված ձևախախտումները (նկ. 2):

Select port , set sensor count and pixel density, then press start to connect

Նկ. 2. Մատույցի, տվիչի և պիքսելների ընտրություն

Նկ. 2-ի առաջին տողում ընտրվում է COM մատույցը, որին միացված է լազերային դեֆորմամետրը, 2-րդ տողում տվիչների քանակն է, 3-րդ տողում՝ ամեն մի տվիչի պիքսելների քանակը: Այս ամենը կատարելուց հետո, սեղմելով *Connect*, *COM* մատույցը միանում է *Web Interface*-ին և էկրանին գրաֆիկորեն ցուցադրվում են գրանցված շեղումները (ձևախախտումները):


Graphs for sensors data



Նկ. 3. Պիքսելից եկած արժեքների արտապատկերումը գրաֆիկական տեսքով

Նկ. 3-ում ցուցադրվում են ամեն մի տվիչից ստացված արժեքները, քանի որ ամեն մի տվիչ պարունակում է պիքսելների խումբ, տվյալ դեպքում ներկայացված է ամեն մի պիքսելի արժեքը: Տվյալ համակարգում օգտագործվել են մի քանի տվիչներ, այդ դեպքում արտապատկերվում են մի քանի գրաֆիկական պատուհաններ:

Նկ. 4-ի ձախ հատվածում ցուցադրված է ընդունիչում ստացված ձևախախտումները գրաֆիկի տեսքով, իսկ աջ մասում՝ *COM* մատույցից եկած պիքսելների տվյալները:




Նկ. 4. Ընդունիչում ստացված դեֆորմացիաները

Նկ. 5-ի ձախ կողմում պիքսելներն են, այս դեպքում՝ 0-ից 4x64 հատ, իսկ աջ մասում տվիչները՝ 4 հատ: Մանդղակի վրա գծիկներով ցույց է տրված լազերի ճառագայթը:

Ի դեպ, մշակված ծրագրային ապահովման ինտերֆեյսում առանձնացված է պիքսելային քայլի ընտրության դաշտն ըստ չափման՝ *մկմ* արժեքի, որը համապիտանի է, եթե կիրառվեն տարբեր ֆոտո տվիչներ, որոնք ունեն ճշտության տարբեր մեծություններ. տվյալ դեպքում այն կազմում է մոտավորապես 200 *մկմ* (175 *մկմ*): Առկա է վերջնահաշվարկային պատուհան, որտեղ վերջնական արդյունքներն արտահայտվում են ըստ հաշվարկային բանաձևի՝  $\Delta x = \Delta y / \sin \alpha$ , այսինքն, կախված հայելու վրա ընկնող ազդանշանի թեքման աստիճանի՝ ապահովվում են ավելի բարձր դեֆորմացիայի ճշտություններ (ըստ ներկայացված օրինակի՝ 40 *մկմ*):

**Եզրակացություն**

Դեֆորմամետրի նախագծման և պատրաստման փուլերում մշակվել է ալգորիթմ, ըստ որի տվյալների վերլուծության և թափամեղմման գործողություններից հետո մշակված տվյալները *COM* մատույցով փոխանցվում է համակարգչային ծրագրին, ուր կատարվում է տվյալների մշակում և ընդունիչում գրանցված դեֆորմացիաները ցուցադրվում են գրաֆիկի տեսքով: Այսպիսով, կարելի է նշագրել, որ ստեղծված լազերային դեֆորմամետրի օրինակով տրված գործակցային հաշվարկի դեպքում տեսական-



Նկ. 5. Պիքսելներն ու տվիչներն արտապատկերող սանդղակ

րեն ապահովվում է մինչև 40 մկմ ճշտություն, իսկ  $\alpha$ -ի ավելի փոքր արժեքների դեպքում կարելի է ապահովել ավելի բարձր ճշտություն: Մա կառույցների ձևախախտումների որոշման նոր եղանակ է, որի կիրառման դեպքում բացառվում են մարդկային և գործիքային գործոններով ի հայտ եկող չափազրման սխալները:

### Գրականության ցանկ

- [1] **Հ.Ս. Պետրոսյան, Ա.Լ. Սմբատյան, Վ.Մ. Գևորգյան, Տ.Ռ. Խաչիկյան**, Լազերային դեֆորմամետրի նախագծում և պատրաստում, ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ 1 (82) (Երևան, 2022) 83-90:
- [2] Инструкция по нивелированию I, II, III, IV классов, ЦНИИГАиК, Москва, 2004, 226 с.
- [3] I, II, III և IV դասերի նիվելիրացման հրահանգ. հաստատված ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2007 թ. ապրիլի 23-ի N 86-Ն հրամանով, գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ 2007թ.-ի սեպտ. 3-ին, 32207312, Երևան, 76 էջ:
- [4] **Վ.Ա. Մարգարյան**, Կիրառական գեոդեզիա. Շինարարության գեոդեզիական ապահովումը. Ուսումնական ձեռնարկ, ԵրՃՇՊՀ, Երևան, 2015.-231 էջ:
- [5] **В.В. Авакян**, Прикладная геодезия. Геодезическое обеспечение строительного производства. Амалданик, Москва, 2013, 432 с.
- [6] **И. Ю. Васютинский**, Гидростатическое нивелирование. Недра, Москва, 1976, 61 с.
- [7] **А.М. Бархударян, Р.А. Мовсесян**, Теоретические основы метода гидродинамического нивелирования, Геодезия и аэрофотосъемка 1 (1976) 9-14.
- [8] **С.В. Марфенко**, Геодезические работы по наблюдению за деформациями сооружений: Учебное пособие. Изд-во МГУГиК, Москва, 2004, 35 с.
